



ՆԱԽԱԳԻԾԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
THE PROJECT IS FUNDED BY THE EUROPEAN UNION

## ԱՆՎՏԱՆԳ ԴՊՐՈՑ> ՎԱՐԺԱՆՔ

Ընթերցանության նյութ

Նախագիծ. Տեղական հնարավորությունների ուժեղացումը երեխաների  
իրավունքների պաշտպանության համար

Բաթումի

2016





Նախագիծը ֆինանսավորվել է Եվրամիության կողմից

THE PROJECT IS FUNDED BY THE EUROPEAN UNION

«Անվտանգ դպրոց» վարժանք - ծրագիրը ներառնում է երկու մոդել. Երեխաների նկատմամբ բռնությունն եւ Ուսուցիչն ու անվտանգ դպրոցը

Մուդելի հեղինակներ.

Մանանա Բոճորիշվիլի

Դարեջան Դվալիշվիլի

Խմբագիրներ.

Խաթունա Իոսելիանի

Թամար Մոսիաշվիլի

Ծրագիրը նախապատրաստվել է «Վրաստանում տեղական հնարավորությունների ուժեղացումը երեխաների իրավունքների պաշտպանության համար» նախագծի շրջանակներում

«ԱՆՎՏԱՆԳ ԴՊՐՈՑ» ՎԱՐԺԱՆՔ

## «ԱՆՎՏԱՆԳ ԴՊՐՈՑ» ՎԱՐԺԱՆՔ

Ընթերցանության նյութ

«Անվտանգ դպրոց» վարժանք> ծրագիրը ներառնում է երկու մոդել. Երեխաների նկատմամբ բռնությունն եւ Ուսուցիչն ու անվտանգ դպրոցը

Մուդելի հեղինակներ.

Մանանա Բոճորիշվիլի

Դարեջան Դվալիշվիլի

Խմբագիրներ.

Խաթունա Իոսելիանի

Թամար Մոսիաշվիլի

*2016 թվականի սկզբին Եվրամիության ֆինանսական աջակցությամբ սկսվեց «Վրաստանում տեղական հնարավորությունների ուժեղացումը երեխաների իրավունքների պաշտպանության համար» նախագծի իրականացումը: Ծրագիրը նախապատրաստվել է սույն նախագծի շրջանակներում:*

*Նախագիծին ունի երկու հիմնական նպատակ.*

*– Հանրային դպրոցների, որոշում ընդունող անձանց եւ հասարակական կազմակերպությունների միջեւ համագործակցության ուժեղացումը վաղ ամուսնությունների, մանկական աշխատանքի եւ դպրոցը թողնելու դեպքերի նվազեցման նպատակով:*

*– Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հնարավորությունների ուժեղացումը երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար*

## Ցանկը.

### 1. Երեխաների նկատմամբ բռնությունը

#### Դարեջան Դվալիշվիլի

1.1 Երեխաների նկատմամբ բռնությունը - Միջազգային եւ տեղական օրենսդրությունը

1.2 Երեխաների նկատմամբ բռնությունը - Մասշտաբն ու ենթատեքստը Վրաստանում

1.3 Վաղ ամուսնություն - Տեղական օրենսդրություն

1.4 Վաղ ամուսնություն - Իրավիճակի վերլուծություն

1.5 Մանկական աշխատանք

1.6 Մանկական աշխատանք - Իրավիճակի վերլուծություն

### 2. Ուսուցիչն ու անվտանգ դպրոցը

#### Մանանա Բոճորիշվիլի

2.1 Դասարանի կառավարման ոճը

2.2 Դիմակայություն

2.3 Հարաբերությունները ծնողների հետ

2.4 Անվտանգ դպրոցի միջավայրը

### 3. Դպրոցական անվտանգությունն եւ դպրոցն թողնելու ռիսկերը

# Երեխաների նկատմամբ բռնությունը

## Դարեջան Դվալիշվիլի

«Գոյություն չունի երեխայի նկատմամբ բռնություն,

որն հնարավոր է արդարացնել:

Երեխայի նկատմամբ բռնությունը սկզբից եւեթ կանխվելու է»

(Երեխաների իրավունքների հիմնադրույթ,

ընդհանուր մեկնաբանություն 13,

Երեխայի իրավունք պետք է պաշտպանված լինի բռնության բոլոր դրսեւորումներից, 2011)<sup>1</sup>

## 1.1. Երեխայի նկատմամբ բռնությունը - Միջազգային եւ տեղական օրենսդրությունը

### Հիմնական տերմինները

Երեխան	Մինչև 18 տարեկան անձը
<b>Երեխայի ընտանիքի անդամը</b>	Երեխայի մայրը, հայրը, պապը, տատը, կինը (ամուսինը), զավակը (խորթ զավակը), խորթ մայրը/խորթ հայրը, քույրը, եղբայրը, կնոջ (ամուսնու) ծնողները, փեսան, հարսը, նախկին կինը (ամուսինը), չգրանցված ամուսնության մեջ գտնվող անձինք եւ նրանց ընտանիքի անդամները, որդեգիրը, ընդունող ընտանիքը (մայրացուն, հայրացուն), որդեգրվածը, որդեգրվածի կինը (ամուսինը), խնամող/հոգացողը
<b>Մանկական աշխատանք</b>	Աշխատանք, որը երեխայից խլում է մանկությունը, նրա ներուժն ու պատիվը, ու վնասակար է նրա ֆիզիկական, մտավոր/ հոգեկան զարգացման համար <sup>1</sup>
<b>Երեխաների (վաղ) ամուսնություն<sup>2</sup></b>	Ձեռական կամ եւ ոչ ձեռական ամուսնություն մինչև 18 տարեկանի չհասած անձի երեխայի հետ:
<b>Անհետաձգելի իրավիճակ</b>	Իրավիճակ, որը սպառնալիք է ստեղծում երեխայի կյանքին ու առողջությանը կամ հնարավոր է հանգեցնի նրա մահվան կամ հաշմանդամության:
<b>Տեստական բռնություն</b>	Գործողություն, որը հանգեցնում է սնունդով, բնակարանային եւ նորմալ զարգացման մյուս պայմանների ապահովման, սեփականության եւ համասեփականության ներքո գտնվող գույքից օգտվելու եւ պատկանելիք բաժնեմասի տնօրինման իրավունքի սահմանափակման:
<b>Շնչափակ հանրակրթական հաստատություն/դպրոց</b>	Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի սահմանած կարգով ավտորիզացված հանրային իրավունքի իրավաբանական անձը կամ մասնավոր իրավունքի արտադրական կամ ոչ արտադրական (ոչ կոմերցիոն <sup>3</sup> իրավաբանական անձը, որն հանրակրթական գործունեություն է իրականացնում ազգային ուսումնական ծրագրին համապատասխան եւ լրիվությամբ ներառնում ընդհանուր կրթության թեկուզ եւ մի աստիճանը:
<b>Պարտադրում</b>	Երեխայի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունը կատարելու կամ չկատարելու գործողությունը, որի կատարումը կամ որից խուսափումը իր իրավունքն է եւ կամ իր վրա զգա իր ցանկությանն հակառակ ազդեցություն:
<b>Զոհ</b>	Ընտանիքի անդամ, որն իր վրա զգացել է ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական բռնություն կամ պարտադրում եւի ում գոհի կարգավիճակը սահմանել է Վրաստանի ներքին գործերի նախարարության համապատասխան ծառայությունն կամ դատական մարմինը կամ ընտանիքում բռնության գոհի կարգավիճակն սահմանող խումբը (գոհի նույնականացման խումբը):

<b>Գործակալություն</b>	Վրաստանի աշխատանիքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության հետական վերահսկողության ենթակա հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ սոցիալական սպասարկման գործակալություն:
<b>Սեռական բռնություն</b>	Երեխայի հետ սեռական հարաբերություն բռնությամբ, բռնության սպառնալիքով կամ զոհի անօգնականության օգտագործմամբ, սեռական բնույթի տարբեր գործողություններ կամ գործողությունների փորձ երեխայի ներկայությամբ
<b>Անտեսամ .</b>	Ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի ֆիզիկական, հոգեբանական կարիքների անբավարարությունը, բազիսային կրթության իրավունքի սահմանափակումը, վտանգից անպաշտպանությունը, ծնունդի գրանցման, բժշկական եւ այլ սպասարկումներից օգտվելու համար պարտադիր գործողությունների չիրականացումը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչն ունի համապատասխան տեղեկատվություն, հնարավորություն եւ միջոցներ համապատասխան սպասարկման համար:
<b>Ֆիզիկական բռնություն</b>	Ծեծ, կտտանք, առողջության վնասում, ազատության ապօրին սահմանափակում կամ այլ նման գործողություններ, որոնք հանգեցնում են ֆիզիկական ցավի կամ տանջանքի, առողջական եւ զարգացման իրավիճակի հետ կապված պահանջների անբավարարություն, ինչն հանգեցնում է երեխայի առողջության վնասման կամ մահվան:
<b>Հոգեբանական բռնություն</b>	Վիրավորանք, շորթում, ծաղրում, սպառնալիք կամ այլ նման գործողություններ, ոոնք հանգեցնում են երեխայի ինքնասիրության եւ արժանապատվության նսեմացման ու որոնք հնարավոր է սպառնալիք ստեղծեն երեխայի առողջությանն ու կյանքին:
<b>Բռնություն</b>	Անձի կողմից երեխայի սահմանադրական իրավունքների ու ազատությունների խախտումը ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, սեռական բռնությամբ կամ պարտադրմամբ:

### ➤ **Երեխաների իրավունքների կոնվենցիան** <sup>3</sup> **Փողված19**

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական եւ կրթական միջոցները պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:
2. Պաշտպանության այդպիսի միջոցներն անհրաժեշտության դեպքում ներառում են սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով անհրաժեշտ աջակցություն տրամադրել երեխային եւ այն անձանց, ովքեր հոգ են

տանում նրա մասին, ինչպես նաև երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի՝ վերը նշված դեպքերը կանխարգելելու եւ բացահայտելու, դրանց մասին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու, բուժելու, եւ այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձեւերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության՝ դատական գործ հարուցելու համար:

### 3. Վրաստանի օրենքը ընդհանուր կրթության մասին

#### Հոդված 3. Ընդհանուր կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները

1. Վրաստանում ընդհանուր կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են.

ա՞Աշակերտին ազգաին եւ համամարդկային արժեքներ ունեցող, ազատ անձնավորության ձեւավորելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը

բ՞Աշակերտի մտավոր եւ ֆիզիկական ունակությունների զարգացումը, անհրաժեշտ գիտելիքներով ապահովումը, առողջ կենսակերպի հաստատումը, ազատականժողովրդավարական արժեքների վրա հենված քաղաքացիական գիտակցականության ձեւավորումը, աշակերտի կողմից մշակութային արժեքների նկատմամբ հարգանքը, ընտանիքի, հասարակության, պետության եւ բնության առջեւ իրավունքապարտականությունների գիտակցման աջակցությունը:

2. Սույն հոդվածի առաջին կետով նախատեսված նպատակներին հասնելու համար պետությունը ապահովում է.

ա՞Ընդհանուր կրթության բաց լինելն եւ հավասար մատչելիություն բոլորի համար՝ ողջ կյանքի ընթացքում

բ՞Վրաստանի ընդհանուր կրթական համակարգի ներառումը միջազգային հանրակրթական տարածքում

գ՞Հանրային դպրոցի անկախությունը կրոնական եւ քաղաքական միավորումներից, իսկ մասնավոր դպրոցների անկախությունը՝ քաղաքական միավորումներից:

դ՞Ազգային գնահատման, ազգային ուսումնական ծրագրի մշակման եւ հավաստագրման համակարգերի ձեւավորումը, ինչը նախատեսում է ուսման որակի սահմանման ու գնահատման միջոցով հանրակրթական գործընթացի ծրագրում եւ կառավարում:

ե՞Հանրակրթական հաստատությունների ավտորիզացման ու հավաստագրման նյութատեխնիկական, ծրագրային ու մարդկային ռեսուրսների նորմատիվների սահմանիում,

զ՞Հանրակրթական հաստատությունների վարչական ու ֆինանսական ինքնավարությունը,

է՞Հանրակրթական հաստատություններում բռնության վերացումը,

ը՞Ինկլյուզիվ կրթության ներդրումը,

թ՞ Ուսուցիչների մասնագիտության կարգավորումը



## Հողված 20. Բռնության անթույլատրելիությունն եւ անվտանգությունը

1. Անթույլատրելի է դպրոցում աշակերտի կամ այլ, ցանկացած անձի նկատմամբ բռնությունը: Ֆիզիկական կամ բանավոր վիրավորանքի դեպքում դպրոցն պարտավոր է, անհապաղ իրականացնել համապատասխան արձագանք՝ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Դպրոցի տարածքում անվտանգության ապահովման համար իրավապահ մարմինների կողմից իրականացվող գործողությունները կարգավորվում են Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ➤ Ազգային ուսումնական ծրագիր

#### Հողված 6. Դասդեկ

1. Հանրային դպրոցում յուրաքանչյուր դասարան պետք է ունենա դասդեկ: Դասդեկը պետք է դասավանդի իր դասդեկական դասարանին:

1<sup>1</sup>. Փոքր կոնտինգենտով դասարանում խորհուրդ է տրվում մի դասդեկը ունենա առնվազն 10 աշակերտ: Բացառությամբ այն դեպքերի, երբ դիրոցում աշակերտների ընդհանուր թիվը 10ից պակաս է: Անթույլատրելի է մի դասարանի/դասարանկոմպլեքսի աշակերտները ունենան տարբեր դասդեկներ:

2. Դասդեկի աշխատանքի նպատակն է օգնել աշակերտներին հասնել ընդհանուր կրթության ազգային նպատակներին, զարգացնել նրանց անհատական, բարոյական, մտավոր ու ֆիզիկական հնարավորությունները: Դասդեկը պետք է նպաստի աշակերտների առողջ ապրելակերպի հաստատմանը, պետք է զարգացնի նրանց՝ ժողովրդավարական արժեքների վրա հիմնված քաղաքացիական գիտակցությունը եւ օգնի գիտակցել ընտանիքի, հասարակության եւ պետության հանդեպ սեփական իրավունքներն ու պարտականությունները:

### 3. Դասդեկի պարտականություններն են.

ա) Ծանոթացնել աշակերտին եւ նրա ծնողին/օրինական ներկայացուցչին(այսուհետ՝ ծնող) իրենց իրավունքներն ու պարտականությունները (Դպրոցի ներքին կարգապահական կանոններ, Աշակերտի էթիկայի օրենսգիրք, դպրոցական ուսումնական պլանի համապատասխան հարցեր եւ այլն):

բ) Պարբերաբար անցկացնել դասդեկական ժամ® Դասդեկական ժամի նպատակն է աշակերտի քննադատական, վերլուծական եւ ստեղծագործական մտածողության զարգացումը: Դասդեկական ժամի շրջանակներում դասդեկը, ելնելով տարիքից աշխատելու է հետեւյալ ուղղություններով.

բ.ա) անհատական եւ բարոյական զարգացում,

բ.գ<sup>ա</sup> առողջ կենսաձեւի ժողովրդականացում,

**բ.դ<sup>ա</sup> անվտանգություն եւ բռնությունից զերծ դպրոցի ժողովրդականացում**

գ) Օգնել աշակերտին լուծել թե՛ ակադեմիական, թե՛ դպրոցական միջավայրում ծագած տարբեր հիմնախնդիրները:

რ) Միջոտրոդ հանդիսանալ՝ աշակերտի, ծնողի եւ ուսուցչի միջեւ ծագած խնդիրները լուծելիս:  
ե) Ծնողին պարբերաբար տեղեկացնել աշակերտի ակադեմիական առաջադիմության, կարգապահության, անձնական խնդիրների եւ հաջողությունների մասին: Անթույլատրելի է ուրիշի ներկայությամբ խոսել մի աշակերտի կարգապահության եւ ակադեմիական առաջադիմության մասին:

3. Անհրաժեշտության դեպքում, հանդիպել հետաքրքրված ծնողին եւ տեղեկացնել աշակերտի ու դպրոցում ընթացող գործընթացների մասին:

4. Դասղեկի աշխատանքը պետք է հիմնվի հետեւյալ սկզբունքներին.

ա) Լիարժեք դաստիարակություն՝ դաստիարակչական աշխատանքը պետք է ուղղված լինի անհատի ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական ու հոգեւոր զարգացմանը:

բ) Աշակերտի հնարավորությունների բացահայտում՝ դասղեկի գործառույթը աշակերտի ներքին ուժերի գործարկումն ու նրա տաղանդի եւ հնարավորությունների բացահայտման համար համապատասխան պայմանների ստեղծումն է:

գ) Աշակերտների մեջ զարգացնել պատասխանատվության ու պարտականության զգացում՝ աշակերտների ընդգրկվածությանը

նպաստելու համար, դասղեկը պետք է նրանց հնարավորություն տա մասնակցել ակտիվությունների (տոնահանդեսներ, արշավներ, էքսկուրսիաներ եւ այլն) պլանավորմանը եւ լուծել այդ ընթացքում ծագած հիմնախնդիրները: Դասղեկը առավելագույնս պետք է հաշվի առնի աշակերտների հետաքրքրությունները:

դ) Համագործակցության սկզբունք՝ դասղեկի հարաբերությունը աշակերտների հետ պետք է հիմնվի համագործակցության, փոխադարձ հարգանքի ու վստահության վրա:

ե) Հանրային դպրոցի դասղեկն իր աշխատանքային գործունեության ընթացքում պետք է օգտագործի Վրաստանի կրթության ու գիտության նախարարության (այսուհետեւ՝ Նախարարություն), հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ Ազգային ուսումնական պլանների ու գնահատման կենտրոնի (այսուհետեւ՝ Կենտրոն), եւ հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի, կողմից մշակված եւ/կամ երաշխավորված մեթոդական դասագրքերը եւ ուղեցույցները:

### ➤ **Երեխաների պաշտպանության ուղղվածությունների (ռեֆերացման) ընթացակարգերը<sup>1</sup>**

(2010 թվականի մայիսի 31-ի Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարի, Վրաստանի ներքին գործերի նախարարի եւ Վրաստանի կրթության ու գիտության նախարարի №152/Ծ–№496–№45/Ծ համատեղ հրամանագիրը).

### **Հոդված 6. Երեխայի նկատմամբ բռնության դեպքի բացահայտումը**

1. Երեխայի նկատմամբ բռնության դեպքի բացահայտումը հանձնարարվում է բոլոր հաստատություններին, որոնք հարաբերվում են երեխաներին, այդ թվում՝ **դպրոցին**, բժշկական հաստատությանը, գյուղական բժիշկին, մանկական մասնագիտացված հաստատությանը, գործակալությանը, տեղամասային ծառայությանն կամ պարզկային ոստիկանությանը:

<sup>1</sup> <https://matsne.gov.ge/ka/document/view/1021481>

2. **Դպրոցներին**, բժշկական եւ մանկական մասնագիտական հաստատությունների տնօրինությունն եւ գյուղական բժիշկները պարտավոր են երեխայի նկատմամբ բռնության կասկածի ծագման դեպքում տեղում պետք է իրականացնեն երեխայի նկատմամբ բռնության կապակցությամբ անհետաձգելի իրավիճակի եւ երեխայի նկատմամբ կատարված բռնության հիմնարար կասկածի նույնականացումն ու իրականացնեն տեղի ունեցած կառավարումը երեխայի պաշտպանության ուղղության (ռեֆերացում) ընթացակարգերով սահմանված իրավասությունների շրջանակներում:

### **3. Երեխայի նկատմամբ բռնության կասկածի աղբյուր կարող է ծառայել ստորև թվարկված գործոններից որևէ մեկը.**

ա) երեխայի մարմնի վրա վնասվածքների առկայությունը (կապուտակներ, թարմ վերք, թարմ քերծվածքներ, դժվար քայլվածքը, մարմնի ուռած հատվածներ, կոտրվածքներ),

բ) **երեխայի կասկածելի վարքը** (երեխան դյուրագրգիռ է, ընկճված, վախեցած է, չի ցանկանում հաճախել դպրոց, դպրոցից բացակայում է, չի սովորում, անխնամ է, չի ցանկանում տուն վերադառնալ, տարիքին անհամապատասխան սեռականորեն լարված է, տարիքին անհամապատասխան տեղեկացված է սեռական կյանքից, կտրուկ փոխել է բնավորությունը, ցնցման պատճառները չի բացատրում):

4. Բռնության դեպքի կասկածի դեպքում, սույն հոդվածի երկրորդ կետով թվարկված հաստատությունները (**դպրոցներին**, բժշկական եւ մանկական մասնագիտացված հաստատությունների տնօրինությունն եւ գյուղական բժիշկները) կատարում են հարցում, որ պարզեն թե որքանով է հիմնարար ծագած կասկածը:

### **5. Կասկածը հիմնարար է համարվում հետևյալ դեպքերում.**

ա) Երեխայի մարմնի վնասվածքների առկայությունը, կատարած հարցման արդյունքում ծագած լրացուցիչ գործոնը՝ երեխայի հայտարարությունը, որ իր նկատմամբ կատարվել կամ կատարվում է բռնություն:

բ) Երեխայի մարմնի վնասվածքների առկայությունը, կատարած հարցման արդյունքում ծագած լրացուցիչ գործոնը՝ վկայի հայտարարությունը, որ ինքն եղել է բռնության փաստի ականատեսը:

գ) Երեխայի մարմնի վնասվածքների առկայությունը, կատարած հարցման արդյունքում ծագած լրացուցիչ գործոնը՝ ծնողի անհամապատասխան վարքը, ինչպիսիք են.

գ.ա) երեխայի վնասվածքի ծանրությունը չի համապատասխանում վնասվածքի ստացման մասին ծնողի բացատրությանը,

գ.բ. ) ծնողի բացատրության մեջ մանրամասները անընդհատ փոփոխվում են,

գ.գ) ծնողը անհամապատասխան է արձագանքում երեխայի վնասվածքին՝ վնասվածքը գնահատում է ավելի թեթեւ, քան իրականությունն է,

գ.դ) չի իրականացվում վնասվածքի պատճառի պարզաբանումը:

դ) Երեխայի կասկածելի վարքի առկայության դեպքում կատարված հարցման արդյունքում ծագած լրացուցիչ գործոնը՝ երեխայի հայտարարությունը, որ իր նկատմամբ կատարվել կամ կատարվում է բռնություն,

ե) Երեխայի կասկածելի վարքի առկայության դեպքում աստարած հարցման արդյունքում ծագած լրացուցիչ գործոնը՝ վկայի հայտարարությունը, որ ինքը եղել է բռնության փաստի ականատեսը:

զ) Երեխայի հայտարարությունը, որ իր նկատմամբ կատարվել կամ կատարվում է բռնություն:

է)Վկայի հայտարարությունը, որ ինքը եղել է բռնության փաստի ականատեսը:

6. Սույն հոդվածի երկրորդ կետով սահմանված սուբյեկտները (**դպրոցների**, բժշկական եւ մանկական մասնագիտացված հաստատությունների տնօրինությունն եւ գյուղական բժիշկները՝ անհետաձգելի իրավիճակի դեպքում պարտավոր են երեխայի նկատմամբ բռնության կասկածի մասին տեղեկատվությունը անհապաղ փոխանցել ոստիկանությանն եւ անհրաժեշտության դեպքում կանչեն շտապ օգնություն, իսկ երեխայի նկատմամբ բռնության հիմնված կասկածի առկայության դեպքում պարտավոր են լրացնել Սոցիալական սպասարկման գործակալություն ՇԻԻԱ-ին դիմելու քարտը (հավելված 2), որը ուղարկվում է գործակալության համապատասխան տարածքային միավորի փոստով կամ ֆաքսով:

7. Սույն հոդվածի երկրորդ կետով սահմանված սուբյեկտները (**դպրոցների**, բժշկական եւ մանկական մասնագիտացված հաստատությունների տնօրինությունն եւ գյուղական բժիշկները՝ անհետաձգելի իրավիճակի դեպքում պարտավոր են երեխայի նկատմամբ բռնության կասկածի մասին տեղեկատվությունը անհապաղ փոխանցել ոստիկանությանն եւ անհրաժեշտության դեպքում կանչեն շտապ օգնություն, իսկ երեխայի նկատմամբ բռնության հիմնված կասկածի առկայության դեպքում պարտավոր են մշակել երեխայի նկատմամբ բռնության հետ ապաված ներքին կանոնադրությունը:

### **Հոդված 15. Երեխայի վիճակի վերահսկողությունը.**

1. Երեխայի անհատական զարգացման ծրագրի կատարման մոնիտորինգն եւ երեխայի վիճակի վերահսկողությունը իրականացնում է գործակալությունը: Վերահսկողության գործընթացին միանում է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ենթակայության ներքո գտնվող հանրային դպրոցը, նաեւ մասնավոր դպրոցը, որտեղ սովորում է բռնության զոհ երեխան կամ մանկական մասնագիտական հաստատությունը: Վերահսկողության գործառույթն նաեւ հանձնարարվում է տեղամասային ծառայությանը՝ իրավասությունների շրջանակներում:

2. Գործակալությունը պարբերաբար (հաճախականությունը կախված է կոնկրետ դեպքերից) իրականացնում է վերահսկողություն բռնության զոհ երեխաների վերականգնողական գործընթացի նկատմամբ: Եթե վերահսկողության գործընթացում պարզվի, որ երեխային պահանջվում է անհատական զարգացման ծրագրով նախատեսված սպասարկման փոփոխում կամ վերացում, գործակալությունը վերանայում է ծրագիրն եւ ապահովում ընթացիկ սպասարկումների դադարեցումը, նոր սպասարկումներով երեխայի զարգացումն կամ երեխայի վերադարձումը ընտանիքին (եթե նա ընտանիքից առանձնացված է):

### **3.Դպրոցն ու մանկական մասնագիտացված հաստատությունը պարտավոր են.**

ա) Գործակալության հետ համաձայնեցմամբ հետեւեն երեխայի վիճակին ու գործակալության սոցիալական աշխատակցին պարբերաբար գրավոր հաշվետվություն ներկայացնեն երեխայի ընթացիկ վիճակի մասին: Սոցիալական աշխատակցի հետ համաձայնեցված, վերոնշյալ հաշվետվությունը պետք է բովանդակի հետեւյալ տեղեկատվությունը՝ երեխայի հափախումը, երեխայի վարքը (առանձնապես անսովոր վարքը, ակադեմիական հաճախումը, երեխայի ֆիզիկական վիճակը, դպրոցական/դաստիարակչական ակտիվություններում ներգրավման որակը:

բ) Բռնացողի կողմից երեխայի հետ կապ հաստատելու փորձի մասին տեղեկացնեն ոստիկանությանը, այն դեպքերում, եթե երեխայի պաշտպանության նպատակով դուրս է գրվել շրջափակման կամ պաշտպանության օրդեր եւ դպրոցը կամ երեխաների դաստիարակչական հաստատությունը դարձել է բռնացողի կողմից երեխայի հետ կապի հաստատման փորձի վկան:

4. Բռնությանի վերաբերյալ տեղամասային ոստիկանություն մուտք գործած տեղեկատվության համապատասխան, տեղամասային տեսուչը իր իրավասությունների շրջանակներում հետեւում է բռնության զոհ երեխային եւ իրավիճակին նրա ընտանիքում, եթե բռնությունը իրականացվում է ընտանիքում:

## **Հոդված 16. Տեղեկատվության փոխանակումը երեխաների պաշտպանության ուղղությունների (ռեֆերացիայի) համակարգում.**

1. Երեխայի պաշտպանության ուղղությամբ (ռեֆերացման) ընթացակարգերի արդյունավետ գործառնության պամար իրականացվում է վերոնշյալ ընթացակարգերում ներառնված սուբյեկտների միջեւ երեխային վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը: Եթե հնարավոր է, տեղեկատվության փոխանակումը պետք է իրականացվի գրավոր տեսքով:

2. Երեխայի պաշտպանության ուղղությամբ (ռեֆերացման) ընթացակարգերի շրջանակներում իրականացվում է հետեւյալ կարգի տեղեկատվության գրանցումը, հավաքումն ու փոխանցումը.

ա) Ոստիկանության աշխատակիցը երեխայի նկատմամբ բռնության կամ հնարավոր բռնության մասին հեռախոսային հաղորդագրությունը փոխանցում է գործակալությանը:

բ) Ոստիկանությունը կազմում է երեխայի նկատմամբ բռնության դեպքերի ռեեստրը, որը մատչելի է երեխաների պաշտպանության ուղղությամբ (ռեֆերացման) ընթացակարգերում ներգրավված սուբյեկտների համար:

գ) Դպրոցը, մանկական մասնագիտացված հաստատությունն կամ բժշկական հաստատությունը երեխայի նկատմամբ բռնության հիմնարար ւասուածի վերաբերյալ գրավոր տեղեկացնում է գործակալության տարածքային միավորին:

դ) Դպրոցը կամ մանկական մասնագիտացված հաստատությունը, գործակալության հետ համաձայնեցված ժամանակահատվածներում սոցիալական աշխատողին գրավոր տեղեկացնում է բռնության զոհ երեխաների իրավիճակի մասին:

ե) Բոլոր ծառայությունները, որտեղ կտեղափոխվի բռնության գոհ կամ հավանական գոհ երեխան անվտանգ միջավայրի ստեղծմանը կամ/ վերականգնման նպատակով, հաշվառում է երեխայի գրանցումը մատյանում եւ գրանցում երեխայի անձնական գործը:

զ) Գործակալությունը հաշվառում է մուտք գործած կամ ուստիկանությունից հեռախոսով ընդունած տեղեկատվությունը երեխայի նկատմամբ բռնության կամ հնարավոր բռնության վերաբերյալ:

է) Սոցիալական աշխատակիցը գնահատում է բռնության գոհ կամ հնարավոր բռնության գոհ երեխային ըստ գնահատման ձեւաթղթի եւ գրում է երեխայի անհատական զարգացման ծրագիրը:

ը) Եթե գործակալության նախաձեռնությամբ երեխային պաշտպանելու համար դատարանի կողմից դուրս է գրվել օրդեր, գործակալությունը տեղեկացնում է դպրոցին, մանկական մասնագիտացված հաստատությանն եւ տեղամասային ծառայությանը՝ երեխայի պաշտպանության համար տրված օրդերի կապակցությամբ:

թ) Սոցիալական աշխատակիցը գրավոր գրանցում է երեխայի վերահսկողության արդյունքները:

### **Հոդված 17. Տեղեկատվության գաղտնիությունը**

Բռնության գոհ երեխայի ով լինելու, նրա առողջական եւ հոգեբանական իրավիճակի մասին ստացած տեղեկատվությունը գաղտնի է եւ դրա հրապարակումը թույլատրելի է միայն երեխաների պաշտպանության ուղղությամբ (ռեֆերացիայի<sup>՞</sup> ընթացակարգերում ներգրավված սուբյեկտների համապատասխան իրավասու աշխատակիցների միջեւ ծառայական գործունեության կատարման նպատակով:

#### **➤ Քաղաքացիական օրենսգիրք<sup>6</sup>**

**Գլուխ երկրորդ. Ծնողների իրավունքներն ու պարտավորությունները երեխաների նկատմամբ:**

### **Հոդված 1197. Ծնողների իրավահավասարությունը երեխաների նկատմամբ.**

Զավակների նկատմամբ ծնողները ունեն հավասար իրավունքապարտականություններ: Երեխան ունի ընտանիքում ապրելու եւ մեծանալու իրավունք:

### **Հոդված 1198. Ծնողների պարտավորությունները զավակների նկատմամբ.**

1. Ծնողները իրավասու եւ պարտավոր են մեծացնել իրենց երեխաներին, հոգան նրանց ֆիզիկական, բանական, հոգեւոր ու սոցիալական զարգացման համար, նրանց դաստիարակեն որպես հասարակության արժանավոր անդամների, նրանց շահերի գերակայության հաշվառմամբ:

**1<sup>1</sup>. Անթույլատրելի է անչափահաս երեխայի դաստիարակության ընթացքում ծնողի/օրինական ներկայացուցչի կողմից դաստիարակության այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք անչափահասի մոտ առաջացնում են ֆիզիկական կամ/և հոգեբանական կտտանք:**

2. Ծնողն ունի երեխային խորհուրդ տալու պարտավորություն:
3. Ծնողն իրավասու է որոշելու, թե ում մոտ եւ որտեղ պետք է ապրի երեխան:
4. Ծնողներին պարտադրվում է պաշտպանել իրենց երեխաների իրավունքներն ու շահերը, ինչը ներառնում է երեխաների գույքի կառավարումն ու օգտագործումը:
5. Ծնողին տրված է իրավունք եւ սահմանված է պարտականություն հարաբերություն ունենալ իրենց երեխաների հետ, որոշեն իրենց երեխաների հետ երրորդ անձի հետ հարաբերության իրավունքը:
6. Ծնողները հանդիսանում են իրենց անչափահաս երեխաների օրինական ներկայացուցիչն ու առանց առանձնահատուկ լիազորությունների հանդես գալու, այդ թվում դատարանում, երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությամբ երրորդ անձի հետ հարաբերություններում:

**Հոդված 1198<sup>1</sup>. Անչափահասի պաշտպանության իրավունքը.**

1. Անչափահասն ունի ծնողի/ օրինական այլ ներկայացուցչի կողմից իրավունքների շահարկումից պաշտպանվելու իրավունք: Անչափահասի իրավունքների եւ օրինական շահերի խախտման դեպքում, այդ թվում երկու կամ մի ծնողի կողմից երեխայի դաստիարակության եւ կրթության հետ կապված պարտականությունները չկատարելու կամ անհամապատասխան կատարելու դեպքում, կամ ծնողի իրավունքի շահարկման դեպքում, անչափահասն իրավասու է անկախ, ինքնուրույն դիմել հոգաբարձուական կամ խնամակալության մարմիններին, իսկ «Ծնողի պատասխանատության եւ երեխաների պաշտպանության միջոցների կատարման հետ կապված օրենսդրության կիրարկման, արդարության, ճանաչման, կատարման եւ համագործակցության մասին» Հասցայի 1996 թվականի հոկտեմբերի 19-ի կոնվենցիայով նախատեսված դեպքերում՝ Կենտրոնական մարմին, իսկ 14 տարեկանից՝ նաեւ դատարան:

2. Ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ում հայտնի են դարձել անչափահասների իրավունքների եւ օրինական շահերի խախտման դեպքերը, պարտավոր են այդ մասին տեղեկացնել հոգաբարձուական եւ խնամակալության մարմիններին ըստ անչափահասի փաստացի գտնվելու վայրի: Հոգաբարձուական եւ խնամակալության մարմինները պարտավոր են նման հաղորդագրությունն ստանալուց անմիջապես հետո իրականացնել Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված միջոցառումները, իսկ «Ծնողի պատասխանատության եւ երեխաների պաշտպանության միջոցների կատարման հետ կապված օրենսդրության կիրարկման, արդարության, ճանաչման, կատարման եւ համագործակցության մասին» Հասցայի 1996 թվականի հոկտեմբերի 19-ի կոնվենցիայով նախատեսված դեպքերում՝ դիմեն Կենտրոնական մարմին:

2<sup>1</sup>. Վրաստանի օրենսդրությամբ սահմանված երեխայի իրավունքների ուղղությանների (ռեֆերացիայի)<sup>2</sup> ընթացակարգերում ներառնված սուբյեկտի եւ երեխաների հարցերով աշխատող

այլ սուբյեկտների կողմից երեխայի նկատմամբ բռնության բացահայտման եւ երեխայի նկատմամբ բռնության մասին տեղեկատվությունը պետական համապատասխան մարմիններին հաղորդելու արտավորության չկատարումը հանգեցնում է պատասխանատվության՝ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. «Ծնողի պատասխանատվության եւ երեխաների պաշտպանության միջոցների կատարման հետ կապված օրենսդրության կիրարկման, արդարության, ճանաչման, կատարման եւ համագործակցության մասին» Հասագայի 1996 թվականի հոկտեմբերի 19-ի կոնվենցիայով սահմանված Կենտրոնական մարմինը Վրաստանի արդարադատության նախարարության կառուցվածքային ենթաբաժինն է:

### **Հոդված 1199. Երեխաների շահերի պաշտպանությունը.**

Ծնողների իրավունքները չպետք է իրականացվեն այնպես, որ դրանով վնաս հասցվի երեխաների շահերին:

- **Վրաստանի օրենքը ընտանեկան բռնության կանխման, ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության եւ օգնության մասին<sup>7</sup>**

### **Հոդված 1.Օրենքի կարգավորման ոլորտը.**

Սույն օրենքը սահմանում է այն գործողությունների միասնությունը, որոնք բնորոշ են ընտանեկան բռնությանը, ընտանեկան բռնության բացահայտման ու կանխման իրավական եւ կազմակերպչական հիմունքները, նաեւ ընտանեկան բռնության զոհերի սոցիալական ու իրավական պաշտպանության եւ օգնության երաշխիքները.

### **Հոդված 3. Բռնություն ընտանիքում**

Ընտանեկան բռնությունը նկատի ունի ընտանիքի մի անդամի կողմից մյուսի սահմանադրական իրավունքների եւ ազատությունների խախտումը անտարբերությամբ կամ/եւ ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, սեռական բռնությամբ կամ ստիպողաբար:

### **Հոդված 9՝. Ընտանեկան բռնության դեպքերի բացահայտումը**

Ընտանեկան բռնության բացահայտումն եւ դրա հետ կապված համապատասխան արձագանքումը ապահովում են իրավապահ եւ դատական մարմինները, նաեւ սույն օրենքով սահմանված կարգով ընտանեկան բռնության վերացման միջոցառումները իրականացնող միջգերատեսչական խորհրդին առընթեր ընտանեկան բռնության զոհի կարգավիճակը սահմանող խումբը: Ընտանեկան բռնության առաջին փաստի նույնականացման եւ դրա հետ կապված արձագանքման նպատակով համապատասխան մարմիններին դիմելու պարտավորությունը դրվում է **բժշկական հաստատությունների, անչափահասի դեպքում նաեւ**



հանրակրթական եւ դաստիարակչական հաստատությունների, հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ սոցիալական սպասարկման գործակալության, հոգաբարձուական եւ խնամակալության մարմինների լիազոր աշխատակիցների եւ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված այլ սուբյեկտների վրա:

#### **ԳԼՈՒԽ IV. Ընտանեկան բնությունից անչափահասների պաշտպանության յուրահատուկ միջոցառումները.**

##### **Հոդված 14. Անչափահասի առանձնացումը բռնացող ծնողից/ծնողներից**

1. Ընտանիքում բռնության ձեւերի առկայության դեպքում սույն օրենքի 11րդ հոդվածով նախատեսված անձի կողմից պաշտպանության օրդերի ստացման պահանջով դատարանին դիմելու դեպքում, դատարանը քննարկում է անչափահասի հետ բռնացող ծնողի/ծնողների հարաբերության հարցը: Անչափահասի նկատմամբ բռնության հետքի առկայության դեպքում դատարանի առջեւ հնարավոր է բարձրացվի ժամանակավոր միջոցառումների տեսքով բռնացող ծնողից/ծնողներից անչափահասի առանձնացման հարցը՝ մինչեւ դատարանի կողմից վերջնական որոշման ընդունումը:

2. Անչափահասի ներկայացուցչի իրավունքների հարցի քննարկմանը պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ բռնացող ծնողին ներկայացուցչի իրավունքի պահպանումը վնասակար է անչափահասի շահերին: Անթույլատրելի է անչափահասի նկատմամբ ծնողների համատեղ խնամակալության հաստատումը, եթե առկա է նրա նկատմամբ ծնողներից մեկի կողմից բռնության հիմնավորված ենթադրությունը:

3. Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, անչափահասը սկսած 14 տարեկանից իրավունք ունի դիմել դատարանին՝ իր իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության համար: Նման դեպքերում դատարանը նշանակում է դատավարական ներկայացուցչի եւ քննարկում է գործը: Անչափահասը ունի խորհրդատուի իրավունք, չհամաձայնվել իր դատավարական ներկայացուցչին եւ ինքն իրեն պաշտպանի: Դատարանը պարտավոր է նաեւ գործի մեջ ներառնել հոգաբարձուական եւ խնամակալության մարմիններին:

##### **Հոդված 14<sup>1</sup>. Անչափահասի (երեխայի) նկատմամբ ընտանեկան բռնության փաստի բացահայտումը**

1. Անչափահասի (երեխայի) նկատմամբ ընտանեկան բռնության փաստը բացահայտման (առաջնային նույնականացման<sup>»</sup> եւ դրա հետ կապված արձագանքման նպատակով համապատասխան մարմիններին դիմելու պարտավորությունը դրվում է բժշկական հաստատությունների, ուսումնական եւ դաստիարակության հաստատությունների, հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ սոցիալական սպասարկման գործակալության, հոգեբարձուական եւ խնամակալության մարմինների ու դրանց լիազոր աշխատակիցների, ինչպես նաեւ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված երեխաների պաշտպանության ուղղությունների (ռեֆերացիայի) ընթացակարգերում ներառնված համապատասխան այլ հաստատությունների եւ դրանց լիազոր աշխատակիցների վրա:

2. Վրաստանի օրենսդրությամբ սահմանված երեխաների պաշտպանության

ուղղությունների (ռեֆերացիայի) ընթացակարգերում ներառնված սուբյեկտների (հաստատությունների կամ/եւ դրանց լիազոր աշխատակիցների) կողմից երեխայի նկատմամբ բռնության բացահայտման եւ երեխայի նկատմամբ բռնության մասին տեղեկատվությունը համապատասխան պետական մարմիններին հաղորդելու մասին պարտականության չկատարումը հանգեցնում է պատասխանատվության՝ Վրաստանի օրենսդրության սահմանված կարգով:

### **Հոդված 17. Ընտանեկան բռնության գոհի իրավունքներն ու պաշտպանության երաշխիքները.**

1. Ընտանեկան հանցագործության եւ ընտանեկան բռնության քրեական դատավարության բոլոր փուլերում, այդ թվում հարցաքննությանը, պետք է հաշվի առնվեն անչափահաս վկայի եւ տուժալի լավագույն շահերը, նրանց տարիքին ու զարգացման մակարդակին համապատասխան: Ընտանեկան հանցագործության կապակցությամբ անթույլատրելի է անչափահաս վկայի եւ տուժալի հարցաքննությունը, նաեւ պաշտպանության կամ պահելու օրդերի հանձնումը ընտանեկան բռնության անչափահաս գոհի հարցաքննությունը (նրանց բացատրությունների ստացումը) ենթադրական բռնացող ծնողի (ծնողների՝ ներկայությամբ: Նաեւ անթույլատրելի է քրեական դատավարությունում որպէս անչափահասի ներկայացուցչի այն անձի ներգրավումը, որը ենթադրաբար բռնացող է կամ որի անկողմնակալության կապակցությամբ առկա է կասկած այդ անձի եւ բռնացող ընտանիքի անդամի միջեւ առկա հարաբերությունների բնույթից ելնելով կամ շահերի դիմակայության այլ դեպքերից, նաեւ նրան (նրանց) անչափահասի կողմից տրված ցուցմունքների (հարցաքննության արձանագրությունը, բացատրագիրը՝ հանձնումը կամ ծանոթացումը:Նման դեպքերում ծնողի՝ քրեական/վարչական դատավարությունում երեխայի ներկայացուցիչը լինելու իրավունքը, համարվում է կանգնեցված: Դատարանում գործի քննության ժամանակ, մինչեւ վեճի վերջնական որոշումը, հոգաբարձուական եւ խնամակալության մարմինը նշանակում է երեխայի ներկայացուցչի, որն էլ դատարանում գործի քննության ժամանակ իրականացնում է երեխայի իրավունքների պաշտպանությունը:

### **➤ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՑ**

### **ԳԼՈՒԽ VII<sup>3</sup>. Վարչական դատավարությունը ընտանեկան բռնության կանխման, ընտանեկան բռնության գոհի պաշտպանության եւ օգնության կապակցությամբ**

### **Հոդված 21<sup>12</sup>. Դատարանին դիմելն եւ ծնողի/օրինական ներկայացուցչի իրավասությունների սահմանափակման հարցը**

5. Ծնողի/օրինական ներկայացուցչի՝ վարչական դատավարությունում երեխայի ներկայացուցչին լինելու իրավունքը դատարանում գործի քննության ընթացքում, մինչեւ գործով վերջնական որոշման ընդունումը համարվում է կանգնեցված, եթե ծնողը/օրինական ներկայացուցիչը ենթադրական բռնացող է կամ նրա անկողմնակալության հարցով առկա են կասկածներ՝ բռնացող ընտանիքի անդամի եւ ծնողի/օրինական ներկայացուցչի միջեւ առկա հարաբերությունների բնույթից ելնելով կամ շահերի դիմակայության այլ դեպքերից:

6. Դատարանը ծնողի/օրինական ներկայացուցչի իրավասությունների կանգնեցման դեպքում այն երեխայի նկատմամբ, ում երկու ծնողների/օրինական ներկայացուցչի ծնողական իրավունքը կանգնեցրել է, ծնողի իրավունքը կամ պարտանակությունը, իր որոշմամբ գործում որպես կողմ հրավիրում է հոգաբարձուական եւ խնամակալության մարմին: Հոգաբարձուական եւ խնամակալության մարմինը նշանակում է երեխայի ներկայացուցչին, որը դատարանում գործի քննարկմանը ներկայացնում է երեխայի շահերը:

## **ԳԼՈՒԽ VII. ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ ԴՊՐՈՋՊԱՆՄԻՈՆՈՒՄ ՏԵՂԱՓՈՐԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑՈՎ**

### **Հոդված 21<sup>35</sup>. Դատարանի դիմելը.**

1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննարկում է.

ա) Վրաստանի կրթության եւ գինտության նախարարությանն առընթեր փորձագետների խմբի միջնորդագիրը անչափահասին դպրոցպանսիոնում տեղափոխելու/դպրոցպանսիոնում պահելու ժամկետի երկարաձգման մասին,

բ) Անչափահասի ծնողի/օրինական ներկայացուցչի հայցը Վրաստանի կրթության եւ գինտության նախարարությանն առընթեր փորձագետների խմբի կողմից ընդունաթ «Ընդհանուր կրթության մասին» Վրաստանի օրենքի 487-րդ հոդվածի 14-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված որոշման կապակցությամբ:

2. Անչափահասի ծնողը/օրինական ներկայացուցիչը դատարանին հայցով դիմում է փորձագետների խմբի կողմից ընդունած որոշման Վրաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի VIII գլխով սահմանված կարգով, նրան հանձնելուց 14 օրվա ընթացքում:

3. Փորձագետների խմբի միջնորդագիրը դատարանին պետք է ներկայացվի միջնորդագրի ներկայացման մասին որոշումն ընդունելուց 10 օրվա ժամկետում:

## **ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԶ<sup>9</sup>**

### **Հոդված 170. Անչափահասին հարբեցնելը.**

Անչափահասին հարբեցնելը կամ ծնողի կամ այն անձի կողմից, ում հանձնարարվել է անչափահասին վերահսկելը, անչափահասի հարբեցողության չկանխումը հանգեցնում է տուգանքի՝ 300 լարիի չափով:

### **Հոդված 172. Ծնողի կամ նրան փոխարինող անձի կողմից անչափահասի դաստիարակության եւ ուսուցման պարտականության չկատարումը.**

1. Ծնողի կամ նրան փոխարինող անձի կողմից անչափահասի դաստիարակության եւ ուսուցման կամ նրա նկատմամբ մյուս պարտավորությունների չկատարումը, ինչն արտահայտվում է անչափահասի դաստիարակության, ուսուցման, բնակարանով, սնունդով եւ նորմալ զարգացման համար անհրաժեշտ մյուս պայմանների ապահովման պարտավորության

հանցագործ չկատարմամբ, անչափահասի կողմից առանց բժիշկի նշանակման թմրանյութերի օգտագործմամբ, փոքր խուլիզանություններով, խուլիզանությամբ, ալկոհոլային խմիչքների օգտագործմամբ, սառը զենքը կրելով, սեռական ազատություններով եւ անձեռնմխելիության դեմ ուղղված ապօրինի գործողությունների կատարմամբ, արտակարգ (էքստրեմալ՝ ծառայությունների կանչի միասնական §112՝ հեռախոսահամարի ոչ նպատակային օգտագործմամբ, հանգեցնում է ծնողի կամ նրն փոխարինող անձի տուգանքին՝ 100-ից մինչև 300 լարիի չափով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումների կրկնությունը 1 տարվա ընթացքում հանգեցնում է ծնողի կամ նրան փոխարինող անձի տուգանքին՝ 500 լարիի չափով:

3. Ծնողի կամ նրան փոխարինող անձի կողմից անչափահասի նկատմամբ նրան սահմանված պարտավորության չկատարումը, ինչն արտահայտվում է մինչև 14 տարեկան անչափահասի կողմից ահաբեկչության վերաբերյալ կեղծ հաղորդագրությամբ, հանգեցնում է ծնողի կամ նրան փոխարինող անձի տուգանքին՝ 1500 լարիի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավախախտումների կրկնությունը 1 տարվա ընթացքում հանգեցնում է ծնողի կամ նրան փոխարինող անձի տուգանքին՝ 2500 լարիի չափով:

**Հոդված 172<sup>6</sup>. Երեխայի նկատմամբ բռնության բացահայտման եւ համապատասխան տեղեկատվությունը իրավասու մարմիններին հաղորդելու պարտավորության չկատարումը.**

Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված երեխաների պաշտպանության ուղղությունների (ռեֆերացիայի) ընթացակարգերում ներառնված սուբյեկտի (հաստատությունների կամ/եւ դրանց լիազոր աշխատակիցների՝ կողմից երեխայի նկատմամբ բռնության բացահայտման եւ երեխայի նկատմամբ բռնության մասին տեղեկատվությունը համապատասխան պետական մարմիններին հաղորդելու պարտավորությունը չկատարելը հանգեցնում է համապատասխան ֆիզիկական անձի զգուշացմանն կամ տուգանքին՝ 50-ից մինչև 100 լարիի չափով: Համապատասխան հաստատությունը (իրավաբանական անձը) տուգավում է 100-ից մինչև 200 լարիի չափով:

**Հոդված 175<sup>1</sup>. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին համապատասխան մարմիններին չտեղեկացնելը.**

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տվյալների հաղորդման մասին պարտավոր պաշտոնատար անձի կողմից համապատասխան մարմիններին չտեղեկացնելը հանգեցնում է տուգանքի հինգ նվազագույն աշխատավարձի չափով:

**ՔՐԵԱՎԱՆ ՕՐԵՆՍՊԻՐՔ<sup>10</sup>**

**Հոդված 126<sup>1</sup>. Ընտանեկան բռնություն.**

1. Ընտանիքի մի անդամի կողմից երկրորդի նկատմամբ բռնության, պարբերական

վիրավորանքի, շոթթման, ծաղրանքի, ինչը հանգեցնում է ֆիզիկական ցավի կամ կտտանքի եւ ինչը չի ներառնված սույն օրենսգրքի 117-րդ, 118-րդ կամ 120-րդ հոդվածներով նախատեսված արդյունքի՝ **առողջության կանխամտածված ծանր, նվազ ծանր կամ թեթեւ վնասվածքի**, պատժվում է հանրօգուտ աշխատանքով ութսունից մինչեւ հիսուն ժամը ժամկետով կամ ազատազրկմամբ մինչեւ մեկ տարի ժամկետով:

2. Նույն գործողություններն, իրականացված.

ա) նախօրոք իմանալով հղի կնոջ, **անչափահասի** կամ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ,

բ) **անչափահասի ներկայությամբ նրա իսկ ընտանիքի անդամի նկատմամբ**,

գ) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

դ՝ անձանց խմբի նկատմամբ,

ե) մի քանի անգամ,

պատժվում է հանրօգուտ աշխատանքով երկու հարյուրից մինչեւ չորս հարյուր ժամ ժամկետով կամ ազատազրկմամբ մինչեւ երեք տարի ժամկետով:

**Դիտողություն.** Սույն հոդվածի նպատակների համար ընտանիքի անդամ է համարվում ամուսինը (կինը՝, մայրը, հայրը, պապը, տատը, երեխաները (խորթ երեխաները՝, թոռները, որդեգիրը, որդեգրի ամուսինը (կինը), վերցված երեխաները, ընդունող ընտանիքը (մայրացուն, հայրացուն), խնամակալը, ծոռը, քույր, եղբայրը, ամուսնու ծնողները, փեսան, հարսը, նախկին ամուսինը (կինը), նաեւ անձինք, ովքեր միասին վարում էին կամ վարում են համատեղ ընտանեկան տնտեսությունը:

## 1.2. Երեխայի նկատմամբ բռնությունը՝ մասշտաբներն ու ենթատեքստը Վրաստանում.

**Ազգային ուսումնասիրությունն առկա գիտելիքների, վերաբերմունքի եւ պրակտիկայի մասին (UNICEF, 2013)<sup>12</sup>**

Հիմնական հայտնագործությունների հակիրճ վերլուծությունը.

1. **Վրաստանում գիտեն, թե ինչ է բռնությունը, առանձնապես ֆիզիկական եւ սեռական բռնության դեպքերում:**

Ամբողջությամբ բնակչությունը լավ հասկանում է, թե որ գործողությունը կարելի է համարել ֆիզիկական կամ սեռական բռնություն եւ համեմատաբար նվազ կարող է նույնականացնել հոգեբանական բռնության կամ երեխայի նկատմամբ արհամարհանքի դեպքերը:

2. **Երեխայի նկատմամբ բռնության հարցով Վրաստանում հանդուրժողական վերաբերմունքի բաժինը մեծ է:**

Հարցման ենթարկվածների այն մասը, որը ընդունելի է համարում երեխայի նկատմամբ բռնությունը (45%) շատ ավելի է, քան նրանք, ովքեր հայտարարեցին, որ մանուկ ժամանակ եղել են բռնության զոհ (30%): Պարզվեց, որ եթե անձը մանուկ ժամանակ զգացել է բռնությունը, առավել հավանական է, որ երեխայի նկատմամբ բռնությունը համարի թույլատրելի:

### **3. Կրթությունը դրական ազդեցություն է գործում բռնության նկատմամբ անձի վերաբերմունքի վրա:**

Մարդու կրթության մակարդակը անմիջականորեն կապված է որպես պատժի ձեռքով՝ ֆիզիկական բռնության նկատմամբ նրա հայացքներից, Որքան բարձր է անձի կրթական մակարդակը, այնքան նվազ է նրա հավանականությունը, որ նա թույլատրելի համարի որպես պատժի ձեռքով՝ ֆիզիկական բռնության կիրարկումը:

### **4. Վրաստանի բնակչության մեծ մասը գտնում է, որ ընտանիքում դաստիարակության խիստ կարգապահական մեթոդների օգտագործումը, ոչ բռնի մեթոդների համեմատությամբ, առավել լավ արդյունքների է հանգեցնում:**

Բնակչության մեծ մասը գտնում է, որ Վրաստանում երեխաների նկատմամբ ֆիզիկական բռնությունը հիմնախնդիր է ներկայացնում: Չնայած դրան, բնակչության 60% գտնում է, որ ընտանիքում դաստիարակության խիստ մեթոդների օգտագործումը առավել արդյունավետ են, քան ոչ բռնի մեթոդները: Երիտասարդների կարծիքը տարբերվում է: Մեծ մասը գտնում է, որ դաստիարակության դրական մեթոդները գերադասելի են բռնությունից:

### **5. Վրաստանի բնակչության մեծ մասը ձեռնպահ է մնում այն գաղափարից, որ «իրավասու մարմինները» կարող են միջամտել ընտանեկան գործերին, նույնիսկ այն ժամանակ, երբ ընտանիքում հնարավոր է բռնության դրսևորումը:**

Հասարակության 94% գտնում է, որ երեխայի համար վնասակար է, թեկուզ նա ընտանեկան բռնության վկան է դառնում: Չնայած դրան, մեծ մասամբ հասարակությունը դեմ է ընտանիքի «ներքին գործերին» արտաքին անձանց միջամտությանը:

### **6. Վրաստանի բնակչության 90%օրհց ավելին չի հավատում, որ երեխայի նկատմամբ սեռական բռնություն կարող են իրականացնել ծնողները կամ ընտանիքի անդամները: Մեծ մասը գտնում է, որ նման հանցագործություն կարող են կատարել ծանոթները, ընտանիքի բարեկամներն էլ անձանոթ անձինք:**

Վրաստանի հասարակության 42% գտնում է, որ ամենայն հավանականությամբ երեխայի նկատմամբ սեռական բռնության «կասկածյալները» օտար անձինք են, իսկ երկրորդ տեղում՝ ընտանիքի բարեկամներն ու ծանոթները (35%): Ծնողների կողմից նման բռնության հնարավորությունը ընդունում է 5%-ը, իսկ ընտանիքի մյուս անդամների կողմից՝ 10%-ը: Այս նկատառումը հակադրվում է գլոբալ առկա փաստացի իվյալների այն մասին, որ բոլորից հաճախ նման հանցագործությունը կատարում են ընտանիքի անդամներն ու ծանոթները: Ի տարբերություն ավագների, երեխաները գտնում են, որ երեխաների նկատմամբ բռնություն իրականացող անձինք մեծ հավանականությամբ ծնողներն են:

**7.Վրաստանի բնակչությունը հավատում է, որ երեխայի նկատմամբ սեռական բռնություն կատարող անձանց դեմ պետք է հարուցվի քրեական գործ, իսկ վերականգնողականությունը թույլատրելի է նրանց նկատմամբ, ովքեր ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն է իրականացնել կամ արհամարհել երեխայի շահերը:**

Բնակչության վերաբերմունքը բռնություն կատարող անձանց նկատմամբ տարբերվում է ելնելով նրանից, թե ինչ տեսակի բռնություն է կատարվել: Բնակչության 85%-ը գտնում է, որ սեռական բռնություն կատարող անձանց նկատմամբ պետք է հարուցվի քրեական գործ: Բռնության այլ տեսակի դեպքում, ինչպիսիք են, օրինակ, ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունն եւ արհամարհանքը, մեծամասնությունը (63-67%) գերադասում է բռնություն կատարած անձանց նկարմամբ վերականգնողական մոտեցումը:

**8.Հասարակությունը գտնում է, որ ոստիկանությունը պետք է միջամտի ֆիզիկական կամ սեռական բռնության դեպքերում, իսկ սոցիալական աշխատակիցները պետք է արձագանքեն հոգեբանական բռնության կամ երեխայի նկատմամբ արհարարական վերաբերմունքի դեպքերում:**

Ֆիզիկական կամ սեռական բռնության դեպքում ոստիկանության միջամտությունը առավել նպատակահարմար է, քան դպրոցներին ու սոցիալական ծառայություններին: Սոցիալական ծառայության միջամտությունը գերադասելի է հոգեբանական բռնության եւ երեխայի նկատմամբ արհամարհանքի դեպքում: Դպրոցի միջամտությունը համարվում է ամենաաննպատակահարմար գործողությունը: Վերջին հարցի շուրջ նման վերաբերմունք դրսևտրեցին նաև հարցման ենթարկված երիտասարդները:

**9.Վրաստանի յուրաքանչյուր հինգերորդ քաղաքացին տեղյակ չէ, թե ինչ է անելու եւ ում է դիմելու երբ դառնում է բռնության վրան:**

Բնակչության 38%-ը գտնում է, որ փոքրիշատե տեղեկություն ունի, թե ինչ է անելու անհրաժեշտության դեպքում:

**10.Երբ մարդն գիտե, թե ինչ է անելու եւ ում է դիմելու բռնության դեպքում, ապա նա 80%-ի հավանականությամբ կհայտարարի հիմնախնդրի առկայության վերաբերյալ:**

- **Երեխայի պաշտպանության ուղղությունների (ռեֆերացիան<sup>2</sup> ընթացակարգերին վերլուծությունն եւ կառավարության համար մշակված հանձնարարականները <sup>0</sup> (UNICEF, 2013)**

Հետազոտության առանձին հիմնական հայտնագործությունը.

1. Բռնության իմաստը բոլորից լավ ընկալում են ոստիկաններն ու սոցիալական աշխատակիցները:

2. Դպրոցի մանդատուրները գիտեն, թե որ գործողություններն են համարելու բնություն, դա առանձնապես լավ ի հայտ եկավ Թբիլիսիում, որտեղ մանդատուրները, համեմատաբար, ավելի շատ վարժանքներ են անցնում:
3. Դպրոցում աշխատող արհեստավարժների (ուսուցիչների ու մանդատուրների) 46%-ը հայտարարեց, որ բնության փաստի մասին հիշատակումը անհրաժեշտ է այն ժամանակ, երբ այդ բնությունը ծանր ձեռք է եւ մի քանի անգամ կրկնվում է:
4. Բոլոր արհեստավարժները խորապես համոզված են, որ ընտանիքի գործերին միջամտելը նուրբ հարց է եւ շատերի կարծիքով, գերադասելի է դրանից խուսափել:
5. Կրթության եւ գիտության նախարարությանը բնության բացահայտման եւ ռեֆերացման հարցերի մասին մչ մի տեսակի հրահանգ չի մշակել եւ ոչ ցլ համակարգային ուսուցում (վարժանք) է անցկացրել:
6. Պետք է բարելավել ռեֆերացման գործերի մոնիտորինգը, առանձնապես դպրոցներում աշխատող արհեստավարժների եւ ուստիկանության կողմից:

### Կրթության եւ գիտության նախարարությանը տրվելիք հիմնական հանձնարարականները (UNICEF, 2013 <sup>12</sup>)

1. Պետք է մշակեն եւ ներդրվեն մանրամասն ցուցումներ (զայդլայներ<sup>ա</sup> եւ ներհամակարգային պարտադիր վարժանքներ բնության նույնականացման ու ռեֆերացիայի հարցերով, ռեֆերացման ընթացակարգերին համապատասխան:
2. Հստակորեն պետք է սահմանիվի ուսուցչի եւ մանդատուրի դերը երեխայի նկատմամբ բնության դեպքի բացահայտման-ռեֆերացման գործընթացում: Որպեսզի մեծացվի դպրոցից սոցիալական գործակալություն ռեֆերացման արդյունավետությունը, ցանկալի է դպրոցում առանձնացի մի աշխատակից, որի հիմնական պարտականությունը կլինի դպրոցում բնության նույնականացումը, ընտանիքի կապակցությամբ՝ օգնությունը, ընտանեկան իրավիճակի գնահատումն եւ արտաքին գերատեսչությունների հետ հարաբերությունների հաստատումը:
3. Ուսուցիչների եւ մանդատուրների աշխատանքային գրանցումներում հստակորեն պետք է սահմանվի, թե ինչպիսինն է լինելու երեխայի նկատմամբ բնության դեպքում իրենց արձագանքը: Բացի այդ, ցանկալի է, որ երեխայի նկատմամբ բնության հարցերը ներգրավված լինեն ուսուցիչների հավաստագրման քննության եւ մանդատուրների պարտադիր վարժանքների կուրիկուլումներում: Արհեստավարժների պատասխանատվությունը պետք է անմիջականորեն վավերացված լինի կրթության նախարարության կամ/եւ դպրոցի համապատասխան փաստաթղթերում:
4. *Հարկ է վերանայել անվտանգ դպրոցի հիմնադրույթը, որպեսզի ընտանիքում երեխաների նկատմամբ բնության արձագանքման գործընթացում դպրոցն էլ ներգրավվի: Դպրոցի աշխատակիցների համար պետք է մշակվեն նոր մեխանիզմներ, որպեսզի բարելավվի երեխաների նկատմամբ բնության դեպքերում նրանց արձագանքումն ու համապատասխան դիմելիությունը:*



### 1.3 Վաղ ամուսնություն՝ տեղական օրենսդրությունը

#### ա) Քաղաքացիական օրենսգիրք<sup>13</sup>

##### Հոդված 1108. Ամուսնության տարիքը

1. Ամուսնությունը թույլատրելի է 18 տարեկանից:

**Հոդված 15073.** (2015 թվականի դեկտեմբերի 16). 17 տարեկան անչափահաս անձի ամուսնության համաձայնության հանձնումը անցումային փուլում:

1. 17 տարեկան անչափահաս անձի ամուսնությունը թույլատրելի է նրա ցանկությամբ եւ միայն դատարանի համաձայնությամբ, այնպիսի հարգելի պատճառի առկայությամբ, ինչպիսին է երեխայի ծնունդը:

2. Սույն հոդվածը ուժը կորցնում է 2017 թվականի հունվարի 1-ից

#### բ) Քրեական օրենսգիրք<sup>14</sup>

**Հոդված 140. Սեռական կապ կամ սեռական բնույթի այլ տեսակի գործողություն դեռ տասնվեց տարին չլրացածի հետ:**

Չափահասի սեռական կապը, սեռամոլությունը, լեյզբիանությունը կամ սեռական այլ կոնտակտը անթույլատրելի ձեւով, հանցագործի համար նախօրոք գիտեցած դեռ տասնվեց տարեկան չլրացածի հետ, պատժվում է ազատազրկմամբ յոթից մինչեւ ինը տարվա ժամկետով:

##### Հոդված 1501. Ամուսնության պարտադրումը.

1. Ամուսնության (այս թվում չրանցված՝ պարտադրումը պատժվում է հանրօգուտ աշխատանքով երկու հարյուրից մինչեւ չորս հարյուր ժամ ժամկետով կամ ազատազրկմամբ՝ երկուի տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, նախօրոք գիտենալով, որ անչափահաս է, պատժվում է ազատազրկմամբ երկուսից չորս տարի ժամկետով:

### 1.3 Իրավիճակի վերլուծությունը.

Վրաստանը Եվրոպայի տարածաշրջանում աչքի է ընկնում մինչեւ 18 տարեկան աղջիկների ամուսնության երկրորդ ամենաբարձր ցուցանիշով: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի<sup>15</sup> (2013) տվյալներով, կանանց 17% ամուսնացել է մինչեւ 18 տարեկանը վերջին մի քանի տարիների ընթացքում (Մոլդովա 18% եւ Թուրքիա 14%): Վրաստանի վիճակագրական տվյալներով, գրեթե յուրաքանչյուր 10-րդ երեխան ծնվել է 15-19 տարեկան երիտասարդ մորից<sup>16</sup>: Հատկանշական է, որ 2008-2012 թվականներին 341 աղջիկ դարձել է վաղ/ստիպողական ամուսնության զոհը, այդ թվում կային նաեւ 12 տարեկան աղբիկներ: Առանձին դեպքերում աղջիկների շրջանում եղել են նաեւ սուիցիդի դեպքեր<sup>17</sup>:

Մինչեւ 18 տարեկան ամուսնության դեպքում աղջիկների ավելի մեծ հավանականությամբ կարող են դառնալ սեռական բռնության եւ պոստվնասվածքի փորձով

դասական օրինակներ՝ անհուսություն, անօգնականություն, խոր հիասթափություն եւ այլն<sup>18</sup>: Նրանք չէին օգտագործում հակաբեղմնավորման արդի մեթոդներն<sup>19</sup> եւ հղիությունը ներկայացնում է առաջատար գործոններից մեկը 15-19 տարեկան աղջիկների մահացության մեջ:

2017 թվականի հունվարից Վրաստանում ամուսնության թույլատրելի ընդունվեց 18 տարեկանը (պաշտոնական գրանցման տարիքը) (Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1108):

Երեխաների ամուսնությունը իրենց ներկայացնում է սեռական բռնության ձևեր, անկախ նրանից, որ հնարավոր է հասարակությունը դա այդպես չընկալի: Շատ հաճախ, չնայած նրան, որ խախտվում է Վրաստանի օրենսդրությամբ ամուսնության տարիքի պահանջը (18 եւ 16 տարեկանում միայն արտակարգ դեպքերում<sup>20</sup> եւ ամուսնության գրանցումը չի իրականացվում, հասարակությունը, միեւնույնն է կատարում է ամուսնության ձևեր, կոչում է ամուսիններ եւ օգնության համար չի դիմում համապատասխան ծառայություններին: Հաճախ նման ամուսնությունները ծրագրվում են աղջկա ընտանիքի կողմից եւ նրանց կողմից երեխայի վրա ճնշում է գործադրվում: Չնայած նրան, որ ամուսնության պարտադրումը քրեական հանցագործություն է, հասարակական կարծիքի պատճառով համապատասխան մարմինների, այդ թվումն դպրոցի արձագանքումն տեղի չի ունենում:

Վրաստանի քրեական օրենսգիրքի 140-րդ հոդվածի համաձայն, պատժելի է չափահասի սեռական կապի կամ սեռական բնույթի տարբեր գործողությունները մինչեւ տասնվեց տարեկանի հետ: Վրաստանի դատախազության տվյալներով, 2015 թվականի հաշվետու ժամանակահատվածում, քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածով ողջ երկրի մասշտաբով հետաքննություն է տարվել ընդամենը 189 գործով, 111140-ով՝ 55 գործով:

Հաշվետու ժամանակահատվածում ՎՔՕ-ի 140-րդ հոդվածով հետաքննություն է սկսվել/տարվում է<sup>21</sup>.

Թբիլիսիի դատախազությունում եւ Թբիլիսիի շրջանային դատախազություններում - 7 գործով,

Քվեմո Քարթլիի երկրամասային եւ շրջանային դատախազություններում - 67 գործով,

Կախեթի երկրամասային եւ շրջանային դատախազություններում - 29 գործով,

Արեւմտյան Վրաստանի երկրամասային եւ շրջանային դատախազություններում - 27 գործով,

Աջարիայի Ինքնավար Հանրապետության դատախազությունում եւ շրջանային դատախազություններում - 24 գործով,

Սամեգրել-Ջեմո Սվանեթի երկրամասային եւ շրջանային դատախազություններում - 21 գործով,

Շիդա Քարթլիի երկրամասային եւ շրջանային դատախազություններում - 12 գործով,

Սամցխե-Ջավախեթի երկրամասային եւ շրջանային դատախազություններում - 2 գործով:

Ուսումնասիրված 16 գործերով հնարավոր տուժյալ է 163 անձ, որից դատախազի որոշմամբ տուժյալ է ճանաչել միայն 122-ը: Այդ թվում 85 դեպքում, չափահասը սեռական կապ է ունեցել 15 տարեկանի հետ, 14 տարեկանի հետ՝ 53 դեպքում, 13 տարեկանի հետ՝ 15 դեպքում, 12 տարեկանի հետ՝ 6 դեպքում եւ 11 տարեկանի հետ՝ 3 դեպքում: Որպես եզրակացություն կարելի է ասել, որ վաղ ամուսնության փաստերը հիմնականում վավերացվում են 14-15 տարեկան տուժյալների մոտ<sup>22</sup>:

Միաժամանակ, նույն տվյալներով, 163 տուժյալների մեծ մասը ազգությամբ վրացիներ են՝ 106 (65%<sup>23</sup> եւ յուրաքանչյուր երրորդը՝ ադրբեջանցի - 55 (34%), մեկ հայ, մեկ ռուս: Իսկ նույն ժամանակահատվածի համար մեղադրյալների տարիքը 18-ից 25-ն էր՝ 111 անձ (69%) եւ 25-ից մինչեւ 35 տարեկան՝ 42 անձ (26%) եւ այդ թվում միայն մեկ երրորդն էր ադրբեջանցի ազգության, վրացիները՝ 103 անձ (64%), ադրբեջանցի - 57 (35%), ասորի՝ 1:

## ԴՊՐՈՑԻ ԹՈՂՆԵԼԸ

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի<sup>23</sup> (2012) տվյալներով, աղջիկները, ովքեր ամուսնանում են մինչեւ 18 տարեկանը, դադարեցնում/ընդհատում են ուսումը:

Չնայած նրան, որ մի քանի փորձ արվեցին դպրեցներում դպրոցը թողնելու մոնիտորինգի եւ դրա կանխման մեխանիզմների ներդրման ուղղությամբ, ցավոք, մինչ օրս չի իրականացվում Վրաստանի դպրոցներում լիարժեք համապատասխան մեխանիզմների հիմնումը: Տարբեր աղբյուրների տվյալներով, 2011-2015 թվականներին 6 277 աղջիկ թողել է, այդ թվում 2014-2015 ուսումնական տարում, Վրաստանում մինչեւ 9-րդ դասարանի ավարտելը 1804 աղջիկ դադարեցրեց ուսուցումը: Աղջիկների կողմից դպրոցը թողնելու հիմնական պատճառը վաղ ամուսնությունն է կամ թողել են փախցնելու բարձր ռիսկի հետեւանքով:

Աղջիկների կողմից մինչեւ բազային աստիճանի ավարտելը ուսման ընդհատման ամենաբարձր ցուցանիշը Թբիլիսիումն է: 2014-2015 ուստարում Թբիլիսիի դպրոցներում մինչեւ 9րդ դասարանը ուսումը ընդհատել է 672 աղջիկ: Աղջիկների կողմից ուսումը ընդհատելու երկրորդ բարձր ցուցանիշը Թբիլիսիից հետո Քվեմո Քարթլիումն է՝ 429, Կախեթիում՝ 206, Իմերեթիում՝ 117, Սամցխե-Ջավախեթիում՝ 98, Աջարիայում՝ 89, Շիդա Քարթլիում՝ 63, Սամեգրելո-Ձեմո Սվանեթիում՝ 76, Սցխեթա-Մթիանեթիում՝ 27, Գուրիայում՝ 17, Աբխազիայում՝ 9, Ռաճա-Լեչխումիում՝ 1:

## 1.3 ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ\_ՏԵՂԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԵՆՄԳԻՐՔ<sup>24</sup>

**Հոդված 4. Աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքը եւ աշխատունակության ծագումը.**

1. Ֆիզիկական անձի աշխատունակությանը ծագում է 16 տարեկանից:
2. Մինչեւ 16 տարեկան անչափահասի աշխատունակության հաստատվում է նրա օրինական ներկայացուցչի կամ խնամակալության/հոգեբարձուական մարմնի համաձայնությամբ, եթե աշխատանքային հարաբերությունը չի հակադրվում անչափահասի

շահերին, չի վնասում նրա բանականությանը, ֆիզիկական ու մտավոր զարգացմանը ու չի խախտում նրա պարտադիր նախնական եւ բազային կրթություն ստանալու իրավունքն ու հնարավորությունը: Օրինական ներկայացուցիչն կամ խնամակալության/հոգեբարձուական մարմնի համաձայնությունը մնում է ուժի մեջ նաեւ նման բնույթի աշխատանքային այլ հարաբերության հարցով:

3. Մինչեւ 14 տարեկան անչափահասի հետ աշխատանքային պայմանագիր կարելի է կնքել միայն մարզական, արվեստի հարցերով եւ մշակութային ոլորտիում գործունեության հարցով, նաեւ գովազդային աշխատանքի կատարման համար:

4. Արգելվում է անչափահասի հետ աշխատանքային պայմանագրի կնքումը խաղային բիզնեսի, գիշերային զվարճանքի հաստատությունների, էրոտիկ եւ պոռնոգրաֆիկ արտադրանքի, դեղագործական եւ տոքսիկ նյութերի պատրաստման, փոխադրման եւ իրացման հետ կապված աշխատանքների կատարման համար:

5. Արգելվում է անչափահասի, նաեւ հղի կամ կրծքով կերակրող կնոջ հետ աշխատանքային պայմանագրի կնքումը ծանր, վնասակար եւ վտանգավոր աշխատանքների կատարման համար:

#### **Հոդված 14. Աշխատանքային ժամանակի տեւողությունը.**

1. Գործատուի կողմից սահմանված աշխատանքային ժամանակի տեւողությունը, որի ընթացքում աշխատողը կատարում է աշխատանքը, չպետք է գերազանցի շաբաթական 40 ժամը, իսկ հատուկ աշխատանքային ռեժիմ ունեցող արտադրությունում, որտեղ արտադրական/աշխատանքային գործընթացը նախատեսում է 8 ժամից ավելի տեւողության անընդմեջ կարգ, շաբաթական 48 ժամ: Հատուկ ռեժիմով ճյուղերի ցուցակը սահմանում է Վրաստանի կառավարությունը: Աշխատանքային ժամ չի համարվում ընդմիջման եւ հանգստի ժամանակը:

1.1 Եթե գործատուի գործունեությունը նախատեսում է արտադրական աշխատանքային գործընթացի 24ժամյա անընդմեջ ռեժիմ, ապա կողմերը իրավասու են կնքել պայմանագիր՝ հերթփոխով աշխատելու վերաբերյալ՝ սույն հոդվածի 2րդ կետի պայմանների հաշվառմամբ եւ եւ աշխատողի աշխատած ժամերին համապատասխան հանգստի ժամերի վերապահմանի պայմանով:

2. Աշխատանքային օրերի (հերթափոխերի<sup>ա</sup> միջեւ հանգստի տեւողությունը չպետք է լինի 12 ժամից քիչ:

3. 16-ից մինչեւ 18 տարեկան անչափահասների աշխատանքային ժամանակի տեւողությունը շաբաթական չպետք է գերազանցի 36 ժամին:

4. 14-ից մինչեւ 16 տարեկան անչափահասների աշխատանքային ժամանակի տեւողությունը շաբաթական չպետք է գերազանցի 24 ժամին:

#### **Հոդված 39. Անչափահասների հետ աշխատանքային պայմանագրի ընդհատումը.**

Անչափահասի օրինական ներկայացուցիչը կամ խնամակալության/հոգեբարձուական

մարմինը իրավասու են անչափահասի հետ աշխատանքային պայմանագրի ընդհատումը, եթե աշխատանքի շարունակումը կվնասի անչափահասի սոցիալական, առողջական կամ նշանակալի այլ շահերին:

## **ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ<sup>25</sup>**

### **Հոդված 42<sup>4</sup>. Անչափահասների աշխատանքային իրավունքների խախտումը.**

Գործատուի կողմից Վրաստանի աշխատանքի օրենսդրությամբ նախատեսված անչափահասին աշխատանքային իրավունքների խախտումը հանգեցնում է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափով:

### **1.3 Իրավիճակի վերլուծությունը.**

Չնայած նրան, որ պաշտոնական վիճակագրության համաձայն, Վրաստանում մանկական աշխատանք գոյություն չունի, 2014 թվականին ԱՄՆ դեպարտամենտի 2014 թվականի հաշվետվության համաձայն, երեխաների մոտ 29,1% (172,378) ներգրավված է գյուղատնտեսական/ագրարային գործունեությունում, երեխաները աշխատում են փողոցում (այդ թվում (ստիպողաբար) մուրացկանություն են անում, թափոն են հավաքում, հանդիսանում են սեռական շահագործման զոհեր<sup>26</sup>): Նույն հաշվետվության համաձայն, չնայած նրան, որ երեխաները հաճախ աշխատում են ընտանեկան ֆերմաներում, դա չի բացառում, որ նրանք ենթակա չեն դառնալու բռնի աշխատանքի կամ/եւ թրեփինգի զոհեր<sup>27</sup>, ինչը վտանգ է ստեղծում նրանց զարգացմանն ու կրթությանը: Երկում հնարավորություն չկա, որպեսզի այն երեխաների համար, ովքեր այսօր օրվա ընթացքում աշխատում են թեկուզ իրենց ընտանիքներին օգնելու համար, կարողանան կրթությունը ստանալ թեկուզ երեկոյան ժամերին կամ/եւ շաբաթ-կիրակի օրերին եւ չընդհատեն ուսումը:

## 2. ՈՒՍՈՒՑԻՉՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԴՊՐՈՑԸ

Մանանա Բոճորիշվիլի

## 2.1 Դասարանի կառավարման ոճը



*Իրական կարգապահությունը  
գիտակցական բնույթի է:  
Կարգնապահությունը միայն  
այն ժամանակ կլինի  
դաստիարակչական  
առավելագույն նշանակության,  
երբ երեխաները իրենք  
կքննարկեն այն մասին, թե  
ինչպես են վարվելու եւ իրենք էլ  
ձգտում են իրենց գիտակցական  
որոշումը կյանքում  
մարմնավորելը*  
Դիմիտրի Ուզնաձե

### Աշակերտը զարգանում է՝ ձեռք է բերում գիտելիքներ, փոխում է վարքը: Ուսուցիչը այդ փոփոխությունները պետք է հարմարեցնի դասարանի կառավարմանը

Աշակերտի պահանջներին ու հնարավորություններին համապատասխան ընթանում է երկու, միմյանց փոխկապակցված գործընթացներ՝ սոցիալիզացումն եւ անհատականացումը

Ուսուցիչը պետք է կարողանա ուսումնական ծրագրի (կուրիկուլումի<sup>Բ</sup> հարմարեցումը աշակերտի տարիքային պահանջներին, հնարավորություններին եւ, ընդհանրապես, դասարանի մթնոլորտի հաշվառմամբ:

Ուսուցման գործընթացի կառավարման ամենագլխավոր կողմը կարգապահությունն է:

**Կարգապահությունը՝** դա միջոցառումներ են, որոնք ուսուցիչը օգտագործում է աշակերտների վարքի հիմնախնդիրները նվազագույնի հասցնելու համար: Արհեստավարժ մանկավարժները համապատասխանորեն պետք է արձագանքեն աշակերտի հիմնախնդրային վարքին:

Կարգապահության հարցը ուսուցման գործընթացում, բոլոր ժամանակահատվածներում, հավասար հրատապ է եղել, թեպետ տարբեր դարաշրջաններում այն ներառնում էր տարբեր նորմեր: Այդ թեման միշտ եղել է գիտնականների ուշադրության կենտրոնում, նրանք կազմել են դասարանի կառավարման ոչճին համապատասխան տարբեր մոդելներ:







## Կառավարման ժողովրդավարական ոճը



Ուսման մեջ հաջողության հասնելու որոշակի մասը կախված է դասարանական ճիշտ մենեջմենտից: Ինչիսի քաղաքացի եք ցանկանում դաստիարակել, ինչ ունակություններով է նա լինելու հագեցված, ինչպիսին է լինելու նրա վարքը դպրոցում եւ դպրոցից դուրս՝ հասակակիցների ու ավագների հետ հարաբերություններում եւ այլն, կախված է ճիշտ ընտրած դպրոցական մենեջմենտի ձեւից:

Ի՞նչ է կատարվում կառավարման ժողովրդավարական ոճի ժամանակ:

Այդ ժամանակ դպրոցական միջավայրում ընթացող բոլոր **հարաբերությունները հիմնված են աշակերտի եւ ուսուցչի համագործակցության վրա:** Դրա համար միշտ առանձնակի նշանակալի է աշակերտների կարծիքն ու վերաբերմունքը հարցի նկատմամբ: Այդ դեպքում ուսուցիչը միայն ուղղություն է տալիս:

**Դասարանը ուսուցչի հետ միասին աշխատում, կազմում է վարքի կանոնները** եւ ընդունում որոշում այդ կանոնների իրականում կատարման համար:

**Դասասենյակում գտնվող նյութերն ու ռեսուրսները մատչելի են** աշակերտների համար եւ այն կարող են օգտագործել ինքնուրույն: Հաճախ ուսումնական նյութի ընտրությունը իրականացվում է աշակերտների համաձայնությամբ:

**Դասասենյակի տարածքը բաժանված է**, գործառույթների գոտիները առանձնացված են (շնորհանդեսային, գրադարան, տեխնիկական եւ այլն): Կահույքի դասավորությունը թույլ է տալիս աշակերտների անհատական եւ խմբային աշխատանքի իրականացում: Բաժանված դասասենյակի տարածքը պետք է համապատասխանի դասի նպատակին ու ձեւաչափին:

**Աշակերտի ցանկալի վարքի արմատավորումը իրականացվում է միայն ճիշտ կատարած ընտրությունից եւ ոչ թե պատժելով:** Դասարանի կառավարման ժողովրդավարական ոճի ժամանակ գերադասությունը տրվում է աշակերտի եւ ուսուցչի համագործակցությանը, որպեսզի իրականացվի անցանկալի վարքի կանխումը:

**Ուսուցիչը հաճախ ստեղծագործական մոտեցում է ցուցաբերում**, փորձում է ցուցադրել, աշակերտներին ուսուցանել արդարությունն եւ երեւոյթները օգյեկտիվ գնահատելու ունակությունը: Դրական մեկնաբանություններ է կատարում այն մասին, ինչը աշակերտները լավ են կատարում: Խրախուսումը աշակերտներին ազդակ է հաղորդում: Նրանց մոտ ծագում է սպասելի հաջողության զգացումն եւ ձգտում են էլ ավելի ակտիվանալ: Իսկ դա նրանց մեջ արմատավորում է սեփական հնարավորությունների հավատը, ինքնավեցահսկողության ու նպատակամղվածության զգացումը: Դրա համար ուսուցիչն աշակերտներին դիմում է հետեւյալ կերպ.

*«Համոզված եմ, որ դա քեզ մոտ լավ կատացվի»,*

*«Հաջորդ անգամ ավելի լավ արդյունքի կհասնես, դրանում այսօրվա դասը կօգնի»,*

*«Կրկին փորձիր»*, *«Փորձիր ընկերներիդ հետ»*,

*«Փորձիր ընկերներիդ հետ, իմ օգնության հույսն ունեցիր»:*

Որպեսզի աշակերտների մոտ արմատավորվեն լավ հատկությունները, դառնան ինքնավստահ ու հաղորդակցվող, ուսուցիչը շատ ավելի հաճախ պետք է աջակցի, քան խրախուսի:

Դասարանի կառավարման ռազմավարությունը ընտրելիս, ուսուցիչը նախօրոք ուսումնասիրում է դասարանում ստեղծված իրավիճակը: Այդ գործընթացին մասնակցում են նաև աշակերտները Հաճախ դրան ակտիվորեն ներգրավվում են ծնողներն ու մյուս առարկաների ուսուցիչները:

Առաջարկում ենք նյութ՝ համեմատության համար

*Միտենա-2*

Դասարանի ավտորիտար կառավարում	Դասարանի ժողովրդավարական կառավարում
<p>Ուսուցիչի եւ աշակերտի՝ ինքնուրույն որոշում ընդունելու հնարավորությունն ու անձնական նախաձեռնության իրավունքը սահմանափակ է:</p> <p>Ուսուցումն եւ դասավանդումը բիհետրական : Ուսուցման հիմնական ձեւը տեղեկատվության հավաքումն է: Ուսուցիչը ավելորդ վերահսկում է գործընթացը:</p> <p>Շարժառիթները՝ գնահատականը, պարգևը, պատժվելու վախը:</p> <p>Ուսուցիչի գործողությունները կախված են առանձին հրահանգներից:</p> <p>Ուժեղ է վախի գործոնը:</p> <p>Արտաքինի, համայնքի հետ համագործակցության համար դպրոցը փակ է եւ ընդհակառակը:</p> <p>Դպրոցների միջեւ համագործակցությունը բացակայում է:</p> <p>Գործընկերների միջեւ վերաբերմունքը ոչ բարեկամական է:</p>	<p>Միջավայրը նպաստում է ստեղծագործական աշխատանքին: Աշակերտների միջեւ եւ ուսուցիչներ միջեւ հարաբերությունները հիմնված են փոխհարգանքի, վստահության, համագործակցության վրա:</p> <p>Որոշման ընդունումը իրականացվում է համատեղ փորձի ընկալման հիման վրա:</p> <p>Ուսուցումը կողմնորոշված են աշակերտի եւ հետագա արդյունքների վրա:</p> <p>Գերադասությունը տրվում է աշակերտի շահերին ու անձնական նախաձեռնություններին:</p> <p>Ուսուցիչների միջեւ հաստատված է թիմային աշխատանքի սկզբունքը:</p> <p>Գերադասությունը տրվում է աշակերտի շահերին եւ անձնական նախաձեռնությանը:</p> <p>Համայնքն ներգրավված է դպրոցի կյանքում:</p>

## ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ



*Ուսուցիչը V դասարանում հարցեր առաջադրելիս նկատեց, որ հաճախ է աշակերտների համատեղ պատասխանը, աշակերտները առանց ձեռք բարձրացնելու իրար ընդհատելով պատասխանում են եւ փորձում են միմյանցից բարձր ասել, ինչը դասարանում իրարանցում է առաջացնում եւ բարդացնում պատասխանի հեղինակի բացահայտելու հնարավորությունը: Ուսուցիչը նախ դիտողություն է անում աշակերտներին, ապա զայրանում եւ խիտ, այն էլ նկատողություններով ու գոռոցով փորձում է հաղթահարել դասարանում ստեղծված իրավիճակը, թեպետ ապարդյուն: Ուսուցիչը դժվարանում է կարգավորել հիմնախնդիրը:*

*Օգնենք.*

### Օգնություն -1

Ուսուցիչը աշակերտներին սովորեցնում է, որ դասին բացականչելն ու միասին պատասխանելը անթույլատրելի է, պարզաբանում է այդ կարգի իմացության եւ կատարման նշանակությունը: Նաեւ նպատակը, թե ինչու է անթույլատրելի աշակերտների նման վարքը: Միաժամանակ նա աշակերտներին տալիս է հնարավորություն իրենք պարզեն, կարծիք հայտնեն, թե ինչու է անթույլատրելի այդպես վարվելը: Հարցը՝ ի՞նչ եք կարծում...

Ուսուցիչն այդ ժամանակ վարվում է հետեւողականորեն եւ աշակերտներին չի պատժում: Մկզբում նա պարզաբանում է աշակերտների վարքի կանոնների պահպանման նշանակությունը, հետո աշակերտներին տալիս իրենց կարծիքը արտահայտելու եւ ճիշտ եզրակացության հանգելու հնարավորություն:

### Օգնություն - 2

Ուսուցիչը դասարան է բերում մի փոքր գնդակ եւ աշակերտներին պարզաբանում. նա, ով կստանա գնդակը, ապա նա իրավունք ունի պատասխանելու առաջադրված հարցին: Աշակերտներին իրավիճակը խրախուսում է եւ փորձում են իրենց լավ պահել, որպեսզի ստանան գնդակն եւ ներգրավվեն դասի ընթացքին: Այդ դեպքում ուսուցիչը դասին ներ է բերում խաղի տարրերն եւ փորձում է աշակերտների մոտ աստիճանաբար զարգացնել ճիշտ վարվելակարգի ունակությունները:

*Վերլուծենք առաջին եւ երկրորդ օգնությունը.*

*Ուսուցիչը փորձում է դասարանը կառավարել ավտորիտար մեթոդով, սակայն սխալներ է թույլ տալիս: Արդյունքում ծագում են հիմնախնդիրներ:*

*Օգնություն մեկը ներկայացված է հումանիտար կառավարում՝ ժողովրդավարական կառավարման տարրերով, իսկ օգնություն երկուսը ժողովրդավարական կառավարումը՝ հումանիտար կառավարման տարրերով:*

Դասարանի արդյունավետ կառավարումը պայմանավորում է աշակերտի հաջողություններն ու դպրոցում շատ այնպիսի ունակությունների զարգացումը, որոնք նրանք կյանքում շատ կօգնեն:

**Դասարանի արդյունավետ կառավարման բաղադրիչները.**

- Վարքի կանոններն ու ընթացակարգերը
- Կարգապահության բարելավմանն ուղղված միջոցառումները
- Ուսուցչի հարաբերությունը աշակերտի հետ

Բաղադրիչներից յուրաքանչյուրը քննարկենք առանձին-առանձին.

**Վարքի կանոններն ու ընթացակարգերը.**

Ուսուցիչը նոր դասարանի հետ հանդիպումը սկսում է ծանոթությամբ եւ դասարանում աշխատանքի հիմնական կարգի մասին զրուցելով: Նա հոգում է արդյունավետ ուսուցման միջավայրի ստեղծման համար: Նման միջավայրում աշակերտը բոլոր պայմաններն ունի սովորելու համար:

Երբ աշակերտները հստակորեն գիտեն, թե որ փուլում ուսիցիչը ինչ է իրենից սպասում, երբ եւ ինչ գործողություն է կատարելու եւ ինչն է անընդունելի, ապա դյուրին է աշակերտների ողջ ժամանակն ու էներգիան ծառայեցնել անմիջականորեն ուսուցման գործում:

Արդյունավետ ուսուցման միջավայրի ստեղծման նշանակալի նախապայմանն է **վարքի կանոնների ու ընթացակարգերի մշակումը:**

**Վարքի կանոնը** դասին աշակերտի վարքի չափորոշիչն է.

Իսկ **ընթացակարգը** մանրամասն պարզաբանում է, թե ինչպես պետք է իրականացվի այս կամ այն գործողությունը:

**Վարքի կանոնների** մշակումը բավականին բարդ է, հարկ է հաշվի առնել, որ այդ կանոնները պետք է կարգավորեն աշակերտների գործողությունները ժամանակի որոշ հատվածում, ուստի տրամաբանական է, որ դրանց մշակմանը մասնակցեն նաեւ աշակերտները:

Կանոնները մշակելիս հարկ է հիշել.

Ցանկալի կանոնների քանակությունը չի գերազանցում 4-6-ին,

Կանոնները պետք է ձևակերպվեն դրական ձևաչափով, խուսափեք «ոչ», «չէ», «արգելված է» բառերից,

Կանոնները պետք է լինեն պարզ ու կոնկրետ եւ մեկնաբանությունների հնարավորությունը բացառեն,

Կանոններին անհրաժեշտ են պարզաբանումները, որ աշակերտները կարողանան յուրացնել,

Աշակերտները կանոնները պետք է նշանակալից համարեն, որպեսզի հասնեն ուսուցման իրենց նպատակին,

Կանոնները պետք է փակցնել աչքի ընկնող տեղում:

Ցանկալի է, կանոնների մշակման ժամանակ ուսուցիչներն ու աշակերտները դրանցում ներկայացնեն կոնկրետ դասարանի կառավարման հետ կապված բարդությունները:

**Ընթացակարգերը-** Եթե կանոններում ներկայացված է, թե ինչ պետք է անես, ապա ընթացակարգերը հստակեցնում են թե ինչպես ես անելու: Ընթացակարգերի պահպանումը պետք է իրականացվի առօրյա: Այն աշակերտը կարատելի է խորհրդի մակարդակով: Դասերը սկսվելուց առաջին երկու շաբաթվա ընթացքում մանկավարժը շատ ժամանակ է հատկացնելու կանոններին համապատասխան ընթացակարգերին: Հակառակ դեպքում, նա ողջ տարվա ընթացքում ստիպված լինի միեւնույն կազմակերպչական հարցերով անընդհատ նկատողություններ անել: Իսկ դա շատ ժամանակ է պահանջում եւ հիմնախնդիրներ է առաջացնում:

Բարձր դասարանների աշակերտների համար ընթացակարգերի մի մասը ծանոթ է, թեպետ բարձր դասարաններում ծագում է նոր ընթացակարգերի յուրացման անհրաժեշտությունը: Օրինակ, բնագիտական առարկաներով փորձարկումների ժամանակ անհրաժեշտ են անվտանգության միջոցառումներ:

### **Վարքի կանոնների եւ ընթացակարգերի պահպանումը**

Տարբեր դասարանների ուսուցիչների ու աշակերտների պահանջարկից եւ մոտեցումներից ելնելով համապատասխանաբար **կանոններն ու ընթացակարգերը** տարբերվում են: Ուսուցիչները կանոններն ու ընթացակարգերը սովորաբար օգտագործում են հետեւյալ **չափորոշիչներում**.

- Վարքի հետ կապված սպասումներում,
- Դասերի օրվա կամ ուսումնական փուլի մեկնարկին եւ ավարտին,
- Դասերը ընդհատելիս,
- Նյութերն ու սարքավորումները,
- Խմբային աշխատանքը,
- Ավանդական ուսուցումն, որը լրիվությամբ վարում է ուսուցիչը:

Վարքի կանոնների եւ ընթացակարգերի մշակմանը որոշիչ է զարգացման որ աստիճանի վրա են գտնվում աշակերտները: Վարքի կանոններն ու ընթացակարգերը ընտրվելու են ելնելով նրանց տարիքի հաշվառումից:

Որպես հանձնարարական առաջարկում ենք թե ինչի վրա պետք է բեւեռեն ուշադրությունը վարքի կանոնների եւ ընթացակարգերի ընտրության ժամանակ տարրական եւ բազային աստիճաններում:

#### Մխեմա-4

Տարրական դասարաններում վարքի կանոններն ու ընթացակարգերը վերաբերում են հետևյալ ոլորտներին.	Բազային աստիճանի վարքի կանոններն ու ընթացակարգերը վերաբերում են հետևյալ ոլորտներին.
<ul style="list-style-type: none"> <li>• Բարեկիրթ վերաբերմունք,</li> <li>• Մարդկանց օգնել,</li> <li>• Հարգել ուրիշի սեփականությունը,</li> <li>• Ուսուցչի կամ աշակերտի խոսակցության մեջ առանց թույլտվության միջամտությունը,</li> <li>• Ուրիշներին ֆիզիկական վիրավորանք չհասցնելը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ուսումնական նյութերը դպրոց տանելը,</li> <li>• Նախօրոք սահմանված տեղում նստելը,</li> <li>• Ուրիշներին հարգելը,</li> <li>• Դասերին խոսակցություններից խուսափելը, երբ ուրիշները խոսում են</li> </ul>

Հետազոտողների մեծ մասը ապացուցում է, որ կարգապահության պահպանման լավ վարքի համար աշակերտին խրախուսելը շատ ավելի արդյունավետ ռազմավարություն է, քան կանոնների խախտման համար նրան պատժելը: Ուստի առաջատար ուսուցիչները կանխման (նախնական միջոցառումներով աշակերտների անցանկալի վարքի վերացումը) եւ ուղղման միջեւ ընտրելիս գերադասությունը տալիս են առաջինին:

Նրանք կարողանում են վարքի կանոնների խախտումը նախօրոք կանխել կամ դրա առաջին ախտանիշերի հայտնվելուն պե՛վ, վերացնել: Վարքի կանոնների լուրջ խախտման արձագանքը այնհիսի արդյունավետ չէ, որքան կդրա կանխումն է:

#### Կանխումը.

Վարքի կանոնների խախտումն եւ կարգապահության հիմնախնդիրները նվազ սպասելի են այն դասարանում, որտեղ գործնական ու փոխադարձ հարգանքի վրա հիմնված միջավայր է ստեղծված: Գործնական եւ փոխադարձ հարգանքի վրա հիմնված դասարանական միջավայրի ստեղծումը նշանակալի է: Առաջարկում ենք սխեմա, որը կօգնի դասարանում նման միջավայրի ստեղծմանը.

#### Մխեմա-5

<b>AE±Yā ā»iū ¿ ÑÇB»É</b>	<b>Ինչպե՞ս հասնել</b>
Աշակերտը ոգևորությամբ համագործակցում է ուսուցչի հետ, որին սիրում եւ հարգում է	Դրա համար ուսուցիչը պետք է գիտենա աշակերտի վիճակը, բնավորությունն ու հարգի նրա անհատական հատկությունները
Աշակերտը կանոնները խախտելու ժամանակ չունի, երբ նա գործով է զբաղվա	Դրա համար ուսուցիչը մանրամասն պետք է ծրագրի դասն եւ ձգտի ողջ ժամանակը լրացնի

	<b>հետաքրքիր, նշանակալի առաջադրանքներով</b>
Աշակերտի վարքի վրա դրական ազդեցություն գործեց ուսուցչի ու ծնունդի համագործակցությունը	Դրա համար ուսուցիչներն ու ծնողների միանման պետք է հոգան իրենց միջև համագործակցության մասին
Աշակերտի համար ուսուցիչը պետք է լինի օրինակելի	Դրա համար կարգը, որին ուսուցիչն ինքն ենթարկվում է, դրա արդարությունն ու պահպանման անհրաժեշտությունը պետք է ցուցաբերի նաև աշակերտին

Դասի ընթացքում աշակերտը թեկուզ մեկ անգամ խախտի որեւէ կարգը, ուսուցիչը չի մոռանա նկատողություն անել: Օրինակ.

*Ինքնուրույն աշխատանքի ժամանակ Նինոն խոսում է կողքին նստած համադասարանցու հետ, ինչի համար ուսուցիչը նկատողություն է անում: Ոչ նվազ նշանակալի է, որ ուսուցիչը խրախուսի Նինոյին, եթե նա ողջ դասին ընթացքում պահպանել է վարքի կանոնները:*

**Աշակերտի խրախուսումը լավ վարքի** համար նշանակալի է: Խրախուսումը ազդակ է այն աշակերտների համար, ովքեր դրան արժանանում են: Միաժամանակ, դա դասարանի ուշադրությունը գրավելու միջոց է:

Ի՞նչ պետք է հաշվի առնել աշակերտին խրախուսելու ժամանակ.

**Խրախուսենք կոնկրետ գործողությունը**, կոնկրետ կանոնի լավ կատարումը: Օրինակ, Գիորգի քո դասարանական տետրը մաքուր ց եւ կարգավորված, ապրես:

**Պարգևատրեք միտումը**, փորձն ու ոչ միայն արդյունքը: Եթե տեսնում եք, որ աշակերտի գործողություններում առաջընթաց է, թեկուզ նա լրիվությամբ չի կատարել ձեր պահանջները, գովեք եւ զգացնել տվեք, որ նրա փորձերը աննկատ չեն մնա:

**Ծնողին տեղեկացրեք աշակերտի հաջողության մասին**: Շատ ուսուցիչների համոզմամբ, այդ միջոցը արդյունավետ է աշակերտի շարժառիթների ուժեղացման համար:

Կանխման միջոցի հաջող իրականացումը չի նշանակում, որ դասարանում վարքի կանոնների եւ ընթացակարգերի խախտում չի լինի: Ուսուցչի արհեստավարժությունից կախված թե որքանով վաղ փուլերում կհայտնաբերի կարգապահության խախտման նշանները եւ որքանով արագ ու անցավագին կկարողանա դա կանխել:

Եղել են դեպքեր, երբ խախտման անտեսումը արդարացվում է: Պետք է հիշել, որ ուսուցչի արձագանքումից հետո ողջ դասարանի ուշադրությունը բեւեռվում է հիմնախնդրային վարքի վրա: Նախ դա արգելակում է դասի նորմալ ընթացքին եւ երկրորդը, կարգապահության խախտողը հնարավոր է ցանկալի համարի համընդհանուր ուշադրության կենտրոնում գտնվելը: Դրանից ելնելով, ուսուցիչը կարող է անտեսության մատնել խախտումը, եթե.

- դա բացառիկ դեպք է կամ պայմանավորված է անսովոր արտաքին պայմաններով (օրինակ, աշակերտի անձնական կյանքում ինչոր արտակարգ բան է պատահել կամ ուսումնական տարվա վերջին օրն է),



- վարքը բնական է աշակերտի զարգացման տվյալ աստիճանի համար (օրինակ, տարրական դասարանի աշակերտների անդադրությունը երկար ժամանակ մի տեղում նստելու պատճառով),
- խախտումը չի արգելակում ուսուցման գործընթացին եւ չի հայտնվել աշակերտների ուշադրության կենտրոնում (օրինակ, Նինոն առաջադրանքը ստանալուց հետո պայուսակից հանեց տետրը, որը ըստ կարգի, հենց սկզբից գտնվելու էր նստարանին):

**Երբ** ուսուցիչը նկատում է, որ աշակերտը խախտում է վարքի կանոնները, սկզբում նա փորձում է աշակերտին մատնանշել աննկատ ու բնականորեն: Մոտենա նրան եւ նրա անունը բնականորեն ներառնի խոսակցության մեջ. «Եռանկյան ներքին անկյունների գումարը, **Նինո**, ինչպես գիտենք, հավասար է...»

**Երբ** նման նուրբ մոտեցումը ապարդյուն է անցնում, ուսուցիչը ստիպված է դիմել այլ միջոցների: Տարվա սկզբին, կոնները մշակելիս պետք է սահմանել, թե ինչ տեսակի խախտմանը ինչպիսի արձագանք է հետեւելու: Պարտադիր է, որ աշակերտները այդ միջոցը համարեն անցանկալի, սակայն արդարացի:

Որպես օրինակ առաջարկում ենք դասարանում կարգապահության խախտման համար նախատեսված միջոցները (միջոցը պետք է համապատասխանի կարգապահության խախտման բնույթին).

1. Աշակերտին տրվում է բանավոր դիտողություն,
2. Աշակերտը կորցնում է ընդմիջման 5 րոպեն:
3. Աշակերտը դասերից հետո մնում է 20 րոպե:
4. Հեռախոսագանգ ծնողներին:
5. Աշակերտին տանում են տնօրենի մոտ:

Որպեսզի նախօրոք մշակված միջոցները արդյունքի հանգեցնեն, ուսիցիչը պետք է մինչևե վերջ լինի հետևողական: Թեկուզ մի բացառության թույլ տալը կարող է ծայրաստիճան վտանգավոր նախադեպ ստեղծել: Հետևաբար, փորձագետները խորհուրդ են տալիս` **չներդնեք միջոցները, եթե պատրաստ չեք միշտ, բոլոր պայմաններում այդ պահպանեն:**

Այդ հետևողականությունը պետք է ուղեկցվի աշակերտի նկատմամբ զգույշ, հոգատար վերաբերմունքով: Դասարանի հետ ուսուիցչի հարաբերությունների գլխավոր լծակը հանգստությունն է: Ուսուցիչը պետք է պահպանի զգայական հավասարակշռությունը, քանի որ զգայականությունը փոխանցվում է: Ուսուցչի զայրույթն հաճախ հանգեցնում է աշակերտի ագրեսիայի կամ աշակերտներին ուսուցչի զգայականությունը զվարճացնում է: Ուստի նշանակալի է, որ ուսուցիչը հաշվի առնի.

- ուսուցիչը պետք է պահպանի զգայական հավասարակշռությունը,
- դիտողությունը պետք է առնչվի կոնկրետ վարմունքին եւ ոչ թե անձին,
- բոլոր դիտողությունները պետք է լինեն կոնկրետ եւ ոչ թե ընդհանուր:

Դասարանի կառավարման տեսանկյունից նշանակալի է ուսուցիչը իր ռազմավարությամբ օգնի աշակերտներին յուրացնել նոր, դասարանին համապատասխան եվ սոցիալապես արդարացված վարվեցողությունը

## Վարքի ինքնակառավարումը

Ինչ է նշանակում վարքի ինքնակառավարումը



**Ինքնակառավարումը** մարդու ունակությունն է իմանա ու կառավարի սեփական վարքը: Տվյալ պարագայում նկատի է առնվում աշակերտի ունակությունը անձամբ նպատակը նշելու եւ ապա այդ նպատակին հասնելու համար միջոցների ծրագրումն ու իրականացումը: Որոշելու համար, թե որ գործողությունները պետք է անել եւ որոնք փոխենք, պարտադիր է հստակորեն գնահատենք գործողությունները:

Ինքնակառավարման ունակության արմատավորման համար աշակերտն ու ուսուցիչը պետք է աշխատեն համատեղ: Դա բավականին բարդ գործընթաց է, որը կարելի է բաժանել մի քանի փուլի.

1. Նպատակային վարքի սահմանումը,
2. Ինքնավերահսկողության մեթոդի մշակումը,
3. Խրախուսման ձևերի ընտրությունը,
4. Ինքնավերահսկողության համակարգի կիրարկումը,
5. Ինքնահաստատումը:

### Նպատակային վարքի սահմանումը.

Աշակերտն ու ուսուցիչը համատեղ սահմանում են, թե աշակերտի որ գործողությունների վրա պետք է բեւեռեն ուշադրությունը: Նման գործողությունների ցուցակը մեծ է, կախված է նրանից թե երկու կողմերը ինչն են համարում առանձնակի հիմնախնդրայինը: Այն վարքը, որի փոփոխումը կամ արմատավորումը համարում եք նպատակային, հնարավոր է կոչել նպատակային վարք:

Երբ նպատակը սահմանվում է աշակերտի կողմից, ապա աշակերտը առավել շահագրգրված է նպատակին հասնելու հարցում: Սույն գործոնը էական է ինքնակառավարման ունակության զարգացման համար: Ուստի, **ցանկալի է ստեղծել իրավիճակ, երբ աշակերտը ինքն է որոշում, թե ինչ նպատակի է ցանկանում հասնել:** Որպես ինքնակառավարման գործընթացի նպատակը պետք է սահմանվի դրական վարքն եւ ոչ թե կարգապահության խախտումը:

Ցանկալի նպատակը	Անցանկալի նպատակը
Աշակերտը ձեռքը բարձրացնելով հաշվի, թե ուսուցչին քանի անգամ է նշան արել պատասխանելու ժամանակ:	Հաշվեք, թե աշակերտը քանի անգամ է ընդհատել խոսակցությունը, անտեղի բացականչություններով:

Նպատակի սահմանման փուլում պարտադիր է, որ նպատակը լինի իրատեսական, սակայն ոչ այնքան դյուրին հասանելի:

### Ինքնավերահսկողության մեթոդի մշակումը

Աշակերտի հետ ուսուցիչը սահմանելու է թե ինչպես է իրականացվելու նպատակային վարքի հաշվառումը: Դրա համար օգտագործվում են տարբեր տեսակի աղյուսակներ կամ սխեմաներ ու հաճախ ժամանակի չափման որեւէ մեխանիզմ:

Առաջարկում ենք օրինակ. Աղյուսակում աշակերտը ուսուցչի ազդանշանով պետք է գրանցի կատարել, թե չի կատարել նպատակային գործողությունը տվյալ պահին:

Միւսմա-6

Ինքնավերահսկողության ձևը.				
Նիւտ, յուրաքանչյուր 15 րոպեն մեկ նշիր, թե ինչպես ես կատարում ուսուցչի կողմից տրված դասարանական առաջադրանքը				
+ միշտ աշխատել եմ				
- չեմ աշխատել				
? ժամանակի մոտ կեսը աշխատել եմ				
9.00 -9.15	9. 15 -9.30	9.30 -9.45	ընդամիջում	10 -10.15
+	?	?	-	+

### Խրախուսման ձևերի ընտրությունը

Խրախուսումը ինքնակառավարման համակարգի գործառնության նշանակալի բաղադրիչներից է: Առանձին աշակերտներին շահագրգրելու համար բավական է այդ գործոնը, որ անձամբ վերահսկի ու գնահատի իր վարքը: Թեպետ, ավելի հաճախ զգացվում է լրացուցիչ **ապացույցների** անհրաժեշտությունը:

Ապացույցների ընտրությունը իրականացվում է աշակերտի զարգացման աստիճանի եւ շահերի հաշվառմամբ: Ելնելով ինքնակառավարման ունակության ամրատավորման փուլից, ապացույցները դասավորվում են հետեւյալ կերպ.

**1 - 3 դասարան.** սմտիկեր, ուսուցչի ժպիտն եւ այլն:

**4 - 6 դասարան.** արտոնություն, համակարգչային խաղ, ուսուցչի օգնությունը, լիդերությունն եւ այլն:

**7 - 9 դասարան.** սոցիալական խրախուսում, աշխատանքների ցուցահանդես, ձեռքբերումների ցուցադրում եւ այլն:

**10 - 12 դասարան.** նշանակալի որոշում ընդունելու իրավունք, օրինակ, ինչ նախագիծ պատրաստի, ինչ ժամկետում...

Ինքնակառավարման ունակության զարգացման չորրորդ փուլում աշակերտի ներքին շարժառիթը այնքան ուժեղ է, որ խրախուսման անհրաժեշտությունը վերանում է: Աշակերտի համար ինքնակառավարումը արդեն ազդակ է: Վարքի ինքնակառավարման ունակության վրա աշխատելիս ուսուցիչը փորձում է աշակերտին առաջարկել ավելի ու ավելի բարձր մակարդակի ապացույցներ: Միաժամանակ այդ անցումը պետք է լինի աստիճանաբար: Արդեն ծանոթ ապացույցներից հետ միասին աշակերտին առաջարկում եք ավելի բարձր մակարդակի եւ ժամանակակի ընթացքում փորձում եք հները լրիվությամբ փոխարինել նորացված ապացույցներով:

### **Ինքնավերահսկողության համակարգի կիրարկումը**

Երբ նպատակային վարքը, դրա հաշվառման ու խրախուսման ձևերը սահմանված են, ուսուցիչը աշակերտին օգնելու է այդ համակարգի լավ ընկալման հարցում եւ նրան սովորեցնի դրա գործնական կիրարկման մեջ:

Հաճախ առնվազն մի քանի օր պահանջվում է, որ աշակերտը համապատասխան ստույգությամբ կարողանա հաշվառել իր վարքը: Այդ օրերի ընթացքում ուսուցիչը պարբերաբար պետք է իր եզրակացությունների արդյունքները համեմատի աշակերտին տրվող տեղեկատվության հետ: Հաջորդ փուլում ուսուցչի պարբերական վերահսկողության կարիք չի զգացվի: Սակայն աշակերտի համար անսպասելի անցկացվող առանձին ստուգումները, բոլոր դեպքերում օգտակար են:

### **Ինքնահաստատումը**

Ինքնակառավարման ռազմավարության կիրարկման արդյունքում աշակերտի վարքը աստիճանաբար մոտենում է նշված նպատակին: Ուսուցչի վերջնական նպատակն է իրատեսական ինքնագնահատման հետ միասին աշակերտի մեջ արմատավորի **ինքնահաստատման** ունակությունը: Աշակերտին կարող եք օգնել նրա համար ամենացանկալի ապացույցների որոնման գործում, որով կարող է ինքն իրեն պարզելատրել նպատակին հասնելու համար:

## **2.2 Դիմակայություն (կոնֆլիկտ)**



Մարդիկ ունեն սեփական արժեքները, որոնք էլ ձեւավորում են նրանց մտածելակերպն ու վարքը: Դրա հիման վրա կատարում են որոշակի քայլեր կամ խուսափում են առանձին գործողություններից: Ուստի բնական է, որ մարդկանց հարաբերություններում հաճախ ի հայտ են գալիս տարբերբող հայացքները տարբեր հարցերի վերաբերյալ:

Դա իր հերթին հարաբերություններում առաջացնում է հինմնախնդիրներ, որոնք պահանջում են որոշման ընդունում: Համատեղ կյանքը որոշումների ընդունման անընդմեջ գործընթաց է: Գլխավորն է, որ ընդունես այնպիսի որոշում, որը չի հանգեցնի մարդկանց միջև դիմակայության, այսինքն հակամարտության:

**Բայցեւայնպէս, ի՞նչ է դիմակայությունը**

**Դիմակայությունը** հանդիսանում է փոխադարձ վերաբերմունք երկու կամ երկուսից ավելի այնպիսի կողմերի (անհատների կամ խմբերի՝ միջև, որոք ունեն կամ մտածում են, որ ունեն փոխադարձաբար անընդունելի նպատակներ:

Կոնֆլիկտը լատինական ծագման խոսք է եւ բառացիորեն նշանակում է դիմակայություն, ընդհարում:

Մարդիկ հաճախ իրենք իրենց չեն կարողանում հասկանալ եւ զարմանալի չէ, որ երբեմն դժվարանում են հարաբերություններ հաստատել ուրիշների հետ, քանի որ հնարավոր է, դեռ լրիվությամբ չի ընկալում ներքին դիմակայությունները: Նկատի ունենք անհատի ներքին դիմակայության տեսակները.

**Շարժառիթը՝** ցանկանում եմ չեմ ցանկանում,

**Բարոյականը՝** ցանկանում եմ անհրաժեշտ է

**Անկատար ցանկությունները՝** ցանկանում եմ կարող եմ,

**Իրատեսականը՝** մի քանի դերերի միաժամանակ կատարման անհնարինության զգացումը

**Աղապտացիա (հարմարվողականությունը)՝** անհրաժեշտ է անհրաժեշտության շրջանակներում կարող եմ,

**Ինքնագնահատման անհամապատասխանությունը՝** կարող եմ. Ա) կամ ավելի շատ, բ) կամ ավելի քիչ:

Ստացվում է, որ դիմակայությունները մեր կյանքի անբաժանելի հատվածներն են, ինչպես հասարակական, այնպես էլ անձնական հարաբերություններում: Բնականաբար, դիմակայություններ լինում են նաեւ դպրոցում: Ուսուցչի եւ աշակերտի, աշակերտների, աշակերտների խմբերի (դասարանների՝ միջև: Դիմակայությունները կարող են լինել քողարկված, բացահայտ կամ մակերեսային:

**Միւսում-7**

Քողարկված դիմակայություն	Բացահայտ դիմակայություն	Մակերեսային դիմակայություն
Արտաքինից չի երեւում եւ հնարավոր է զգացվի դրա բացահայտման անհրաժեխտությունը	Խոր արմատներ ունի, արտաքինից պարզ երեւում է եւ պահանջում է այնպիսի միջոցների ընդունման	Թույլ արմատներ ունի կամ ընդհանրապես չունի: Այն կարող է ծագել անհետաքրքիր պատճառով

	անհրաժեշտությունը, որոնք կառնչվեն ինչպես հիմնարար պատճառներին, այնպես էլ արտաքին արտահայտումներին:	եւ դրա համար կարող է կարգավորվել հաղորդակցության բարելավմամբ:
--	--	---

### Դիմակայությունների կարգավորման ուղիները

Ուսուցիչը պետք է ստեղծի ուսուցման այնպիսի միջավայր, որ աշակերտները լինեն կողմնորոշված համագործակցության եւ դիմակայությունների խաղաղ կարգավորման ուղղությամբ: Դրա համար, բնականաբար ուսուցիչը նախ ինքն պետք է կարողանա պարզել դիմակայության ծագման պատճառը, ընտրի ճիշտ ռազմավարությունը, գիտակցի ընթացիկ գործընթացներում իր անձնական պատասխանատվությունը: **Գլխավորն է, չսպասի դրսից դիմակայության հիմնախնդրի կարգավորումը, այլ ինքն ցուցաբերի ակտիվություն, փորձի հաղթահարել եւ կառավարել հակադրության իրավիճակը:** Եվ ամենակարեւորը, աշակերտներին պետք է սովորեցնի կառավարել դիմակայությունները, որ նրանք մշակեն անհրաժեշտ ունակություններն եւ ինքնուրույն կարողանան խուսափել դիմակայություններից:

Ուսուցիչը դասի ընթացքում պետք է օգտագործի տարբեր ակտիվություններ (դերակատարումներ, մոդելացում, բանավեճ, իրավիճակի գիտակցում եւ այլն), որի ժամանակ աշակերտին տրվում է իր կարծիքն արտահայտելու, ինքնուրույն հիմնախնդրի շուրջը աշխատելու, որոշում ընդունելու, դիմակայության կարգավորման կառուցողական ուղիների որոնման հնարավորություն:

Դիմակայությունները մեր կյանքի առաջ մղիչ ուժերից մեկն է: Իսկ ուժը էներգիայի աղբյուր է: Դիմակայության էներգիան ունի երկու դրսեւորում՝ բացասական եւ դրական:


**Բացասական էներգիան** գործում է ապակառուցողական եւ հանգեցնում է բռնության, կործանման, ոչնչացման: **Դրական էներգիան** կարող է հանգեցնել անձնական, հասարակական, սոցիալական դրական փոփոխությունների, առավել լավ անձնական եւ հասարակական հարաբերություններ ու վերաբերմունք:

**Եթե դպրոցում ավտորիտար կարգ է,** ապա այնտեղ դիմակայության էներգիայի վերացման համար հաճախ **օգտագործում են ուժը:** Սակայն, երբ էներգիան ճնշված է, դիմակայության իրավիճակը շարունակվում է այլ տեսքով, հանգեցնում է տրամադրվածության: Ցանկալի արդյունքների սիստեմային հնարավորությունը գրեթե կորչում է: Աճում է անարդարությունից ծագած դժգոհությունը եւ ապագայի համար միայն այնպիսի հնարավորություններն են ուրվագծվում, ինչպիսիք են բռնությունն ու բացասական էներգիայի տարբեր դրսեւորումները: Ելքը դրական էներգիայի կառավարման մեջ է: Դիմակայության էներգիան դինամիկ գործընթաց է: Բոլոր դիմակայությունները, ինչպես մարդիկ, բացառիկ են, սակայն, ինչպես մարդիկ, դիմակայություններն էլ ունեն զարգացման ընդհանուր ուղի, որն անցնում են ծագումից մինչև սրումը: Ուղին, որն անցնում է դիմակայությունը. այսինքն դիմակայության զարգացումը (սրումը) շատ է նմանվում փոթորիկի, քանի որ նույնքան արագ վրա է հասնում, ուժն ավելանում է եւ կարող է լուրջ վնասի հասցնել:

## Մխենա 8 «Փոթորիկ»

1. Սկզբնական ձև
2. Հիմնախնդրի բազմացումը
3. Թշնամական դաշինքները
4. Հաղորդակցման հեղաթուրումը
5. Ծայրահեղ դիրքեր
6. Դեմոստրացիա

Տվյալներ-8. «Խառնուրդ»



*«Դիմակայությունները սղում են  
փոփոխությունների կողմը,  
փոփոխությունները սղում են հարմարվելու  
կողմը, իսկ հարմարվելը՝ փրկության կողմը»  
Լուիս Կոզերի (Lewis A. Coser) Ամերիկյան  
սոցիալոգ 1910-2003*

**Դիմակայության ամենադրական գործառույթը կայանում է նրանում**, որ դիմակայությունը դրսևորված դիմադրության ձև է, իրենից ներկայացնում է զարգացման աղբյուր: Առանձին հետազոտություններում, որոնք հենվում են Ժան Պայժեի դպրոցի գաղափարների վրա, երևում է, որ սոցիո-կոգնիտային դիմակայությունները կարող են վերածվել երեխայի մտավոր զարգացման աղբյուրի:

Սոցիո-կոգնիտային դիմակայությունը նախատեսում է իրավիճակ, երբ անհատները տարբեր պատասխաններ ունեն նույն հիմնախնդրի հարցով եւ տրամադրված են միասնական որոշման ընդունմանը: Եվ ամնակարեւորը, մասնակիցների համար այդ դիմակայությունը ուժեղ է նրանով, որ ազդեցություն է գործում նրանց մտավոր զարգացման վրա:

Հաճախ անչափահասի բացասական վարքի պատճառը **«հետախուզությունն»** է: Անչափահասին հետաքրքրում է ինքն իրեն փորձի նոր իրավիճակում, իմանա հիմնախնդիրների կարգավորման նոր միջոցները, հնարավորությունները, մոտեցումները: Այսպես տեղի է ունենում նրա սոցիալիզացիան: Դա բնական գործընթաց է, որի հետ դժվարությամբ են հաշտվում ինչպես ծնողները, այնպես էլ ուսուցիչները:

#### **Ուսումնական գործընթացին բնորոշ տիպային դիմակայությունները.**

**Գործնական դիմակայությունները** ծագում են ուսումնական առաջադրանքների կատարման, արտադասարանական գործունեության ժամանակ եւ աշակերտի միտումների հարցերի կապակցությամբ:


**Վարքի դիմակայությունները** ծագում են աշակերտի կողմից վարքի կանոնների խախտման, դասերը պարապելու կամ ուսումնական հաստատությունից դուրս, նաեւ ուսմուցչի կողմից վարքի կանոնների խախտման ժամանակ:

**Դիմակայության վերաբերմունքները** ծագում են ուուցման գործընթացի ժամանակ աշակերտի եւ ուսուցչի զգայական-անհատական հարաբերություններում:

#### **Դիմակայության պատճառները կարող են կապված լինել.**

- ռեսուրսների բաժանման,
- փոխադարձ վերաբերմունքից,
- արժեքների տարբերությունից,
- նպատակների տարբերությունից,
- նպատակին հասնելու միջոցների տարբերությունից,
- անբավարար հաղորդակցությունից,
- հոգեբանական յուրահատկությունից,
- սխալ, խեղաթյուրված կամ անբավարար տեղեկատվությունից,
- գործող օրենքներից,
- ժամանակի սղությունից, կարգավիճակից, սոցիալական դերից եւ այլն:





*«Ամենաուժեղը նա է, որ կարողանում է  
ինքն իրեն կառավարել»  
Սենեկա*

*Սենեկայի խոսքերը կարող են  
աշակերտի համար դառնալ կարգախոս  
դիմակայության իրավիճակի պարզաբանման  
ու վերլուծության ժամանակ: Աշակերտները  
պետք է իմանան բոլոր հնարավոր  
իրավիճակների մասին, որոնք հանգեցնում են  
տարբեր արդյունքների: Մարդիկ տարբեր  
իրավիճակներում օգտագործում են տարբեր  
ռազմավարություններ, քանի որ  
ռազմավարության ընտրությունը կախված է  
այն նպատակից, որին ցանկանում էք հասնել:*

Մի նպատակը գործն է, մյուսը՝ հարաբերությունները: Ելնելով դրանից հնարավոր է գործել հինգ տարբեր ռազմավարություններով.

**Մխենա -9 Գործ/Հարաբերություն**

**Մխենա -9 -Թումախ**

**Մեփական շահերի բավարարում**

**Գործ**

\*Մրցակցություն

\*Համագործակցություն

Արդյունքը՝ շահել

Արդյունքը՝ շահել - շահել

Փոխզիջում

Արդյունքը՝ շահել - շահել

Պարտվել - շահել

Հեռացում


Հարմարվում

Արդյունքը՝ պարտվել - պարտվել

Արդյունքը՝ պարտվել - շահել

Հ ա ր ա ր ք ր ւ թ յ ո ւ ն

Ուրիշի շահերի բավարարում



ჩიორ თავმადარყოიონინერნ იონენ ინჯაყენ ირასკან, აყნაყენ ლ რაყსასკან კოიღმერ: ტრენ მარეოი ხამარ ნჯანსკაყიღერ ხარაყერყოიონინერნ ენ, აყო იყეყოიღმ ერინ აყან ენ მღყიღმ გოიღმ იო ხასკათსკერ:

ჯნაყად სრან, ირ იჟიმასკაყოიონინერნ ირადიღასკიღმ მასანსკყოიონინერნ რადასკანინერნ დანერ იო გვაყადიღმ ე, იჟიმასკაყოიონინერნ იონინერნ ინსერ ირასკან კოიღმერ:

**იჟიმასკაყოიონინერნ ირასკან კოიღმერ.**

- იჟიმასკაყოიონინერნ ხანდგენიღმ ე ხიინსაჟინერნ, ირერ კარდაყიღმან კარხე იონინერნ:
- იჟიმასკაყოიონინერნ ლყოიღმინერნ ფიფიჟყოიონინერნინერნინერნ ხნარადყოიონინერნ ე სთენიღმინერნ:
- იჟიმასკაყოიონინერნ ხნარადყოიონინერნ ე თაყიჟს აყარდელღმ, ჟენ იღმ ენე მენე:
- იჟიმასკაყოიონინერნ ლარადყოიონინერნ ათკაყოიონინერნ იყეყოიღმ ლიგეარაფიღმან ხნარადყოიონინერნ ე რნდენიღმინერნ:
- იჟიმასკაყოიონინერნ კაროიღმ ე ირანაყ ჟიჟანინერნ:
- იჟიმასკაყოიონინერნ ინენსახასთათმან ხნარადყოიონინერნ ე რნდენიღმინერნ:

Երբ աշակերտին տրվում է սխեմաներից ելնելով դիմակայության վերլուծության հնարավորություն, ապա նրա համար դժվար չէ դիմակայությունից խուսափումը:

Աշակերտները պետք է գիտենան, թե որ գոծողություններն են նպաստում դիմակայության թուլացմանը, դերակատարության խաղերի օգնությամբ հնարավոր է աշակերտին հասցնել դիմակայության ժամանակ վարվելակարգը:

### **Գործողությունները, որոնք նպաստում են դիմակայության թուլացմանը.**

- Ձեր զգացումները արտահայտեք առանց դիտողությունների եւ մեղադրանքների:
- Պետք չէ խորացնել վիճարկելի հարցը:
- Պետք չէ նսեմացնել մյուս մարդկանց կամ հեղինակություններին:
- Խուսափեք «միշտ», «երբեք» խոսքերի օգտագործումից:
- Ուրիշներին պետք է մակնիշներ կպցնել:
- Պետք չէ գործել ի հեճուկս դիմակայության մյուս կողմի:
- Մինչեւ չհանգստանաք, որոշում չընդունեք:

### **7 քայլի հաշտեցման ուղղությամբ**

- Հանեք դիմակը:
- Ընկալեք իրական հիմնախնդիրները:
- Հրաժարվեք՝ միայն հաղթանակ տրամադրվածությունից:
- Փնտրում եք մի քանի հնարավոր որոշումներ:
- Գնահատում եք տարբերակներն ու ընտրում լավագույնը:
- Խոսեք այնպես, որ իրականում ձեզ հասկանան:
- Ընդունում եք հարաբերությունների արժեքն ու զգուշությամբ վերաբերվում դրանց:

### **Ակտիվ ունկնդրում.**

- Ունկնդրման ժամանակ պետք է եզրակացության հանգել, փորձեք միայն հանրագումարել ասվածի իմաստը:
- Ուշադրություն դարձրեք զրուցակցի ոչ միայն խոսքերի բովանդակության, այլև նրա զգացմունքների վրա:
- Զգացմունքները հանրագումարելիս հաշվի առեք դրանք հզորությունը:
- Խուսափեք նախաբանային «եթե ճիշտ հասկացա», «ինչպես հասկացա» եւ այլ արտահայտություններից:

### **Ինչպես ուրիշներին փոխանցել ձեր զգացմունքները.**

- Ընդդիմախոսին ներկայացրեք հիմնախնդիրը եւ ոչ թե ձեր որոշումը:
- Ընդդիմախոսին ներկայացրեք ձեր զգացումները:
- Ձեր զգացումների զուգակցեք տեղի ունեցած փաստիի հետ:
- Աշխատեք չգերազնահատել ընդդիմախոսին:
- Ձեր զգացումների պատասխանատվությունը ինքներդ ստանձնեք:

Մեդիատորի դերի կատարման համար անհրաժեշտ կանոնների իմացությունը պարտադիր է համապատասխան ունակությունների զարգացման համար: Մեդիատորի, այսինքն հաշտեցնողի դերը դատավորություն չէ: Առաջարկում ենք այն սկզբունքները, որոնք հետեւելու է մեդիատորը դիմակայության կարգավորման ժամանակ.

- Մեդիատորը իրավունք չունի արտահայտելու իր անձնական կարծիքը:
- Մեդիատորը իրավունք չունի քննադատել ներկայացված գաղափարներից որեւէ մեկը:
- Մեդիատորը իրավունք չունի կողմերից որեւէ մեկին փաթաթելու իր կարծիքը:
- Մեդիատորը իրավունք չունի ընդունել որոշում առանց կողմերի հետ համաձայնեցման:

Մեդիատորը միայն նպաստում է կառուցողական երկխոսությունը սկսելուն եւ նրա օգնությամբ հնարավոր է դառնում համաձայնության հասնելը:

Դիմակայության կարգավորման համար մեդիատորը դիմում է տակտիկայի, որը հայտնի է «Սաքոյի դիվանագիտություն» անվամբ:


Մխենա- 10

### Մեդիատոր

Դիմակայությունում ներգրավված կողմերը

Ելք՝ -10

- - մեդիատոր
- - կոնֆլիկտի մասնակիցներ



## Օգտագործած գրականությունը.

1. კლასის მართვა. რობერტ ჯ. მარზანო. 2009წ
2. საწავლო და პროფესიული გარემო, მასწავლებელთა პროფესიული განვითარების ცენტრი . თბილისი 2008წ
3. «Психология конфликта». Санкт-Петербург. 2000 г.
4. «Вопросы психологии». Москва 2000 г.
5. 'mSvidobis damkvidreba gaxleCil sazogadoebaSi'. konfliktებისა და molaparakebebis saerTaSoriso kvleviTi centri (ICCN). Tbilisi. 2001 w.
6. «Педагогика» Учебник нового века. Москва. 2000 г.
7. «Социальная психология». В.Г.Крысько. Москва. 2001 г.

## 2.3    Ծնողների հետ հարաբերությունները



Ծնողը ուսուցչի համար նշանակալի ռեսուրս է հիմնախնդրային վարքի կանխման/վերացման տեսանկյունից: Ցավոք, շատ հաճախ ծնողների դերը անտեսվում է, կամ նրանց դիմում են միայն այն ժամանակ, երբ իրավիճակը առանձնակի սրվում է:

Ծնողի հետ հարաբերությունը լրացուցիչ ժամանակ է և ենթադրում է պահանջում, թեպետ ծնողի հետ արդյունավետ համագործակցությունը ընձեռնում է վարքի լուրջ հիմնախնդիրը կանխելու հնարավորություն:

Ծնողի հետ հարաբերության համար ցանկալի է դպրոցի տնօրինությունը, ուսուցիչները մշակեն ընթացակարգեր, որոնք կներկայացվեն դպրոցի ներքին կանոնակարգում: Դպրոցի ներքին կանոնակարգում կարող է ներկայացվել ծնողի հետ հանդիպման պարբերականությունը, նրանց հետ քննարկվող ոլորտների ցանկը, հանդիպման ձևաչափն ու հանդիպման մասնակից մարդկանց: Առաջարկում ենք մի քանի անձնարարականներ, որոնք կօգնեն ծնողի հետ արդյունավետ հարաբերությունների հաստատմանը.

### Ծնողների տեղեկացումը

Որպեսզի ծնողն դառնա ձեր դաշնակիցը, ապա նշանակալի է նրանց մշտական տեղեկացումը: Ծնողին միշտ հետաքրքրում է թե ինչպես է վարվում եւ ինչպիսին ակադեմիական հաճախություն ունի զավակը:

Նրանց տեղեկացման համար կարող եք ծրագրել տարբեր միջոցառումներ՝ ուսումնական տարվա սկզբին ծանոթացեք բոլոր ծնողների հետ եւ նրանց ներկայացրեք ձեր ծրագրերն ու աշխատանքի կարգը, փոխանցեք նշանակալի բոլոր տեղեկությունները:

Նախօրոք ծրագրեք, թե ինչպես եք մտադիր ծնողին տեղեկացնել: Առանձին ուսուցիչներ շաբաթվա վերջին ծնողներին հաղորդագրություն երեխայի գնահատման եւ շաբաթվա ընթացքում նրա վարքի մասին: Հարաբերության սույն ձևը արդյունավետ է, քանի որ.

Սկզբից եւեժ կանխվում է այնպիսի դեպքը, երբ ծնողը միայն այն ժամանակ է երեխայի մասին տեղեկություն ստանում, երբ արդեն իրավիճակը սրված է:

Ծնողները շատ զբաղված են եւ հաճախ չեն կարողանում դպրոց գալ: Երեխայի վարքի եւ ակադեմիական հաճախության մասին ծնողը միայն ձեր հաղորդումներից կամ հեռախոսազանգով չպետք է տեղեկանա հիմնախնդրային իրավիճակի ժամանակ:

### **Ծնողին չստիպեք գրավի պաշտպանվողի դիրք**

Հիմնախնդրի կարգավորման համար ծնողի հետ կապվելիս հիշեցեք, որ ծնողի համար քննադատությունը այնքան էլ դյուրընդունելի չէ: Կարող է լինել, որ ծնողը զբաղեցնի երեխայի դիրքը եւ փորձի պաշտպանել իր գավակին ու ուսուցչի վարքագծում փորձի գտնել իր գավակի վատ վարքի պատճառները: Հետեւաբար ծնողին լավ պարզաբանեք, թե ինչու եք կանչել եւ ինչու է հանդիպումը կարելու անմիջականորեն աշակերտի համար: Աշխատեք նրա երեխայի վարքագծում գտնել դրական տարրեր եւ չխոսեք միայն անհաճո հիմնախնդիրների մասին: Օրինակ, կարող եք ծնողին ասել, որ նրա գավակը գիտակցել է, թե որքան անցանկալի էր նրա վարքը: Նաեւ, մեկնաբանեք կոնկրետ գործողությունը եւ ոչ թե ընդհանրապես խոսեք թե ինչպես «կոպիտ» կամ «անդաստիարակ» է երեխան:

### **Հիմնախնդրային վարքի վերացման համար օգնեք ծնողին**

Նրանից հետո, երբ ծնողը տեղեկացված է, փորձեք նրան ներգրավել աշակերտի վատ վարքի վերացման գործում, որեւէ կոնկրետ առաջադրանք տվել: Օրինակ, եթե վատ վարվեցողությունը չդադարեցնի, ծնողը երեխային զրկի համակարգչային խաղերից կամ սահմանափակի հեռուստացույցը նայելու ժամանակը: Բացի այդ, երբ երեխան զգում է, որ ուսուցիչն ու ծնողը մի թիմում են, աապա վատ վարվեցողությունը դադարեցնելու հավանականությանը շատ ավելի է մեծանում:

### **Միջոցառումները ծրագրեք ծնողների հետ միասին**

Ծնողների հետ լավ հարաբերությունների հաստատման համար նշանակալի է նրանց հետ միասին ծրագրեք որեւէ միջոցառում: Դա կարող է լինել էքսկուրսիա կամ տոնական համերգ, այցելությունը թանգարան եւ այլն: Կարող ենք կամավոր ծնողներին ներգրավել այն գործունեության մեջ: Օրինակ, խնդրեք օգնեն դպրոցի կարգավորման, միջանցքներում հերթապահության գործում եւ այլն: Նաեւ լավ կլինի, եթե ծնողին ընձեռնվի դասերին ներկա լինելուի հնարավորություն:

### **Դասարանի կառավարմանը ստեղծագործական մոտեցում ցուցաբերեք**

Ուսուցիչները իրենք են ստեղծում յուրահատուկ ռազմավարությունները եւ նրանց անձնական հաջող փորձը բոլորը հրապարակայնորեն ընդօրինակում են: Արդեն նշեցինք, որ դասարանի կառավարման հետ առնչվում են մի քանի տեսություններ, թեպետ բոլորը չէ, որ մանրամասնորեն քննարկել ենք: Հուսով ենք, որ տրված օրինակները ուսուցիչներին կօգնեն դասարանի կառավարման իրենց սեփական արդյունավետ տեսության ստեղծման գործում: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ դասարանի կառավարումը ինքնանպատակ չէ: Գլխավորը աշակերտների շարժառիթի մակարդակի բարձրացումն է եւ նրանց հնարավորությունների առավելագույն բացահատումը:

## 2.4 Անվտանգ դպրոցական միջավայր

### Դպրոցական ֆիզիկական միջավայրը ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ ուսուցման նկատմամբ աշակերտի վերաբերմունքի վրա

Դպրոցական միջավայրի ճիշտ ստեղծումը ապահովում է աշակերտի այն միջավայրը, որտեղ ուսուցումն ու զարգացումը տեղի է ունենում հարմարավետ, անվտանգ եւ ակադեմիական վիթխարի տարածքում: Միջավայրից է կախված, թե որքանով են ռեսուրսները մատչելի աշակերտների համար:

Համակարգչային լաբորատորիան, գրադարանը միակ ռեսուրսը չէ, որն աշակերտը կարող է օգտագործել: Աշակերտի համար նշանակալի է առաջին հայացքից ակադեմիական անօգուտ միջավայրը (միջանցքները, բակերը եւ այլն<sup>8</sup>, որն իրականում նպաստում է աշակերտների, ինչպես նաեւ աշակերտների ու ուսուցիչների միջեւ տեղեկատվության ակտիվ փոխանակմանը: Նշանակալի է այնպիսի տարածքի առկայությունը, որը նպաստում է համագործակցությանն ու փորձով սովորելուն:

**Հանրագումարում.** Դպրոցական միջավայրը նշանակալի ուղերձ է բովանդակում այն մասին, թե որքանով են ճանաչված ակադեմիական ձեռքբերումներն, ինչը շարժառիթների արդյունավետ աղբյուր է:

### Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ դպրոցի ֆիզիկական միջավայրի կարգավորումը որոշակի անցանկալի վարքագծի սահմանափակման վրա:

Ենթակառույցների ճիշտ ծրագրման դեպքում ծագում է հնարավորություն սխալ վարքի (միջանցքներում վազել, բռնություն, վանդալիզմ եւ այլն<sup>9</sup> կանխման ուղիով մեծացնել աշակերտների անվտանգությունը: Դպրոցի տարածքում արժեքները փոխարինող խորհրդանշային ուղերձները հնարավոր է աշակերտներին տրամադրեն որոշակի գործողությունների ձեւավորմանը:

**Հանրագումարում.** Դպրոցական միջավայրը հնարավոր է ազդեցություն գործի ճիշտ արժեքների ձեւավորման վրա, ինչը ինքնին կապակցված է դրական գործողությունների հաստատման հետ:

### Դպրոցում առկա ֆիզիկական միջավայրը ի՞նչ ազդեցություն է գործում աշակերտի առողջության վրա.

Ճիշտ ծրագրված եւ օգտագործածենթակառույցների պայմաններում, աշակերտները հազվադեպ են հիվանդանում, ավելի քիչ են իրենց վատ զգում եւ նվազ վնասվում դպրոցում գտնվելու ժամանակ: Անցանկալի զգացումները նշանակալի ազդեցություն են գործում ակադեմիական առաջադիմության վրա:

### Դպրոցական միջավայրի կարգավորման հիմնական սկզբունքները

Համակարգությունը	Ինկլուզացումը	Արժեքներով կողմնորոշումը
Միջավայրի կարգավորման առանձին վերցրած որեւէ տարրը աշակերտի վրա ազդեցություն չի գործում: Այդ ամենը պետք է քննարկենք որպես մեծ համակարգի հատված:	Դպրոցական միջավայրը պարտադիր կարգով պետք է հարմարեցված լինի տարբեր պահանջարկի աշակերտների համար:	Գոյություն ունեն հատուկ մշակված ձեւեր նրա համար, որպեսզի աշակերտներին փոխանցվեն որոշակի արժեքներ:
Օրինակ, միջանցքում աշակերտների աշխատանքների ցուցահանդեսը առնչվում է արժեքների արմատավորման, աշակերտների անհատականության ճանաչման, միջանցքների լուսավորման, ուսումնական ծրագրին, աշակերտների աշխատանքների նկատմամբ ուսուցիչների վերաբերմունքին, դպրոցական կյանքով ծնողների շահագրգրվածությանն եւ այլն:	Օրինակ դա նախատեսում է, ամենից առաջ նշանակալի տարածքների մատչելիությունը այն աշակերտների համար, ում համար տեղաշարժվելը դժվար է եւ ովքեր, հնարավոր է, օգտագործում են տեխնիկական հատուկ միջոցներ:	Օրինակ, ուսուցչանոցում ուսուցիչների սեղանների վիճակը հնարավոր է որոշակի տեղեկատվություն բովանդակեն աշակերտի համար (իմպլիցիտային):

### Ի՞նչ է դպրոցական հայրենասիրությունն եւ ի՞նչ նշանակություն ունի այն

Հաճախ դպրոցական հայրենասիրությունը ծագում է այն ժամանակ, երբ դպրոցը որոշակի նշաններով տարբերվում է մյուս դպրոցներից: Դպրոցական հայրենասիրությունը զարգանում է, երբ դպրոցը մյուսներից տարբերվող անվանում, խորհրդանիշ, կարգախոս, առաքելություն ունի: Եթե այդ խորհրդանիշերից ուրեւէ մեկի մշակմանը աշակերտները մասնակցություն են ունեցել, ապա դպրոցի այդ ցուցադրումների նկատմամբ դրական վերաբերմունքը առավել նկատելի է դառնում աշակերտի մոտ:

### Ինչպիսի՞ն կարող են լինել դպրոցական միջավայրում հանդուրժողական վարքի օրինակները

Դպրոցն, որն հարգում է տարբերվող կարծիքը, ծագումը, մշակույթը, ավանդույթները, ապա դա արտահայտվում է նաեւ նրա ֆիզիկական տարածքում: Եթե իր տարածքի կարգավորման ժամանակ դպրոցը ընդգծում է որեւէ կրոնի կամ որեւէ ազգային խմբի առավելությունը, ապա այդ դեպքում հիմնախնդրային է դառնում ազգային կամ կրոնական այլ



խմբերի գոյության արժեքների ճանաչումը: Ուստի լավագույն ելքը, դպրոցի լինի չեզոք տարածք, որտեղ որևէ խմբի առավելությունը ընդգծված չէ:

Հանդուրժողական վարքի օրինակ է, երբ դպրոցի աշակերտներին տրվում է հնարավորություն իրենց քննադատական վերաբերմունքը արտահայտեն դպրոցում ընթացող գործընթացների կապակցությամբ: Դպրոցի ֆիզիկական կամ երեւակայական տարածքները կարող են լինել նման նկատառումների զարգացման հիանալի հիմքեր: Եթե աշակերտները ունենան դպրոցական տեղեկատվական թերթիկներ, դպրոցական թերթ կամ դպրոցական բլոգ, որտեղ տարբեր կարծիքներ ունեցող աշակերտների միջեւ, դպրոցի ուսուցիչների ու տնօրինության միջեւ երկխոսություն տարվի, դա զգալիորեն կնպաստեր անվտանգ, հաճելի դպրոցական կլիմայի ստեղծմանը, որտեղ կձեւակերպվեն երկրի ապագա լիդերներն ու պատասխանատվություն ունեցող քաղաքացիներ:

### **Ի՞նչ ազդեցություն է գործում դպրոցի ֆիզիկական ենթակառուցվածքի կարգավորումը առողջության վրա.**

Աշակերտների կրթության որակի վրա նշանակալի ազդեցություն է գործում այն, թե որքան հազվադեպ են նրանք հիվանդանում: Միաժամանակ, դպրոցն աշակերտներին պետք է նախապատրաստի ապագա առողջ կենսաձեւի համար: Դպրոցի ֆիզիկական ենթակառուցվածքի կարգավորումը կարող է ինչպես դրական, այնպես էլ բացասական դեր կատարել աշակերտների առողջության վրա:

### **Ի՞նչ ազդեցություն է գործում դպրոցի ֆիզիկական ենթակառուցվածքի կարգավորումը սոցիալիզացիայի վրա.**

Աշակերտը դպրոցում ոչ միայն ունակություններ եւ գիտելիքներ է ձեռքբերում: Այստեղ տեղի է ունենում որպես հասարակության անդամի նրա ձեւավորումը: Հետեւաբար, նշանակալի է, որ աշակերտը դպրոցում կարողանա յուրացնել այն փորձը, որը նրան կյանքում կօգնի հարաբերություններ հաստատել առանձին մարդկանց կամ մարդկանց խմբերի հետ: Հենց այդ պատճառով, դպրոցը առանձնակի պետք է հոգա այնպիսի միջավայրի ստեղծման հարցով, որտեղ իրականացվում է աշակերտի ակտիվ սոցիալիզացումը:

### **Ֆիզիկական միջավայրի կարգավորումը որքանո՞վ կարող է ակտիվացնել դպրոցական համայնքի ներգրավումը.**

Ֆիզիկական միջավայրի կարգավորումը կարող է ակտիվացնել դպրոցական համայնքի ներգրավումը դպրոցի կյանքում: Համայնքի անդամներին պետք է ցույց տալ, որ դպրոցը հարգում է նրանց ավանդը եւ այդ հարգանքը դպրոցում կարտահայտվի այնպես, որ նրանց ավանդի մասին բոլորը կտեղեկանան:

### **Դրական ի՞նչ ազդեցություն ունեն դպրոցական ենթակառուցվածքը աշակերտների միջեւ բռնության նվազեցման գործում.**

Դպրոցական ենթակառուցվածքը կարող են դրական ազդեցություն ունենալ աշակերտների միջեւ բռնության նվազեցման վրա: Ճիշտ ծրագրված դպրոցի տարածքում նվազ է նրա հավանականությունը, որ բռնությունը մնա աննկատ: Նաեւ նշանակալի է այն բանի

ընկալումն, որ որոշակի տեսանկյունից, անբավարար կարգավորված դպրոցը կարող է ինքն դառնալ բռնության բռնկման աղբյուր:

Նշանակալի է, որ դպրոցում չլինեն խավար, չլուսավորված եւ անտեսված վայրեր: Առանձնապես հիմնախնդիրային են աշակերտների գուգարաններն եւ այդ առումով, նշանակալի է, որ այդ տարածքում որոշակիք մոնիտորինգ իրականացվի: Ցանկալի է, որ բարձր եւ փոքր դասարանների գուգարանները լինեն առանձնացված:

### **Ի՞նչ նշանակություն ունի, որ դպրոցն ունենա էվակուացիայի ծրագիրը.**

Դպրոցն պետք է ունենա էվակուացիայի ծրագիրը: Սակայն, միաժամանակ, նշանակալի է, որ այդ ծրագիրը լինի հասկանալի աշակերտների եւ դպրոցի անձնակազմի համար: Հենց այդ նպատակին հասնելու համար նշանակալի է, որ դպրոցում անցկացվեն վարժություններ: Էվակուացիայի ծրագրից բացի, դպրոցի շենքից հեռանալու մի քանի ուղիներ պետք է գոյություն ունենան: Արդյունավետ էվակուացիայի համար նշանակալի է, որ դպրոցի աստիճանները լինեն ազատ արգելքներից: Հրդեհի տարածմանը արգելալու է միջանցքների միջեւ փակված դռների առկայությունը:

### **Ի՞նչ նշանակություն ունի ճանապարհային անվտանգության ուսուցումը.**

Դպրոցների մեծ մասը գտնվում է ճանապարհների մոտակայքում: Ծագում է աշակերտներին ճանապարհային անվտանգության ուսուցման անհրաժեշտությունը: Միաժամանակ, դպրոցները հնարավոր է հոգան փողոցներում այնպիսի արգելքների տեղադրման հարցով, որոնք կխանգարեն աշակերտներին փողոցն անցնելիս: Շատ երկրներում ծնողների թվից ընտրում են կամավորների, նրանք կարգավորում են ճանապարհային երթուղիները, որպեսզի աշակերտների դասերի ավարտից հետո կարողանան անվտանգ անցնել փողոցը:

Իսկ դպրոցի անվտանգության եւ առանձնապես փոքր դասարանցիների անվտանգության համար նշանակալի է, որ դպրոցի բակը լինի ցանկապատված: Դա նվազագույնի կհասցնի աշակերտների չծրագրված շարժումը դպրոցից փողոցի ուղղությամբ:

### **Անվտանգ դպրոցի համար ի՞նչ նշանակություն ունի հիմնական տարածքների կարգավորումը.**

#### **Դասասենյակները.**

Օրվա մեծ մասը աշակերտները անց են կացնում դասասենյակներում: Ուստի նշանակալի է, որ դասասենյակներում ստեղծվի առողջ, հարմարավետ եւ դրական վարքը խրախուսող միջավայր: Ակնհայտ է, միջավայր ասելով, առաջին հերթին նկատի է առնվում սոցիալական միջավայրը, հարաբերությունները մյուս երեխաների, ուսուցիչների, հյուրերի հետ: Թեպետ, միջավայրի նշանակալի բաղադրիչներից է դրա ֆիզիկական հատվածը:

#### **Օդափոխությունը.**

Արդեն խոսեցինք դասասենյակներում բավարար օդափոխության մասին, հետևաբար հիմա միայն կավելացնենք, որ օդափոխության մասին ցուցումները պետք է տրվեն բոլոր ուսուցիչներին: Նաև օդափոխության նշանակությունը, ցանկալի է պարզաբանել նաև ծնողներին: Նոր ուսուցիչին դպրոց ընդունելու ժամանակ նրան պետք է պարզաբանեք, որ դպրոցում գործում են որոշակի կանոններ կապված նրա հետ, թե ուսուցիչը ինչպես է հոգալու դասասենյակների օդափոխության հարցում:

### **Լուսավորությունը.**

Դասասենյակներում նշանակալի է ոչ միայն բավարար լուսավորությունը, այլև այն, որ լուսավորությունը չարգելակի ուսուցման գործընթացին: Վարագույրերն կամ կախիչները դժուրությամբ վնասվում են: Դասասենյակների պաշտպանությունը աւելի անմիջական ճառագայթներից նշանակալի է առողջ միջավայրի առկայության համար: Դասասենյակներում ցերեկային լուսավորությունը պետք է գերազանցի արհեստական լուսավորությանը: Թեպետ, նշանակալի է նվազեցնել արեւի ճառագայթներից ծագող անհարմարությունը:

### **Դռները.**

Վրաստանի շատ դպրոցներում դասասենյակների դռները բավականին վատ վիճակում են: Դրանցից շատը քանդվում է դրանց սխալ օգտագործում արդյունքում: Աշակերտները շատ հաճախ անփույթ են վարվում դռների հետ: Ցանկալի է, որ դռները ունենան հատուկ սարքավորումներ, որոնք կնվազեցնեն դրանց շխկոցով փակվելու հավանականությունը: Նաև հնարավոր է, դպրոցում ընդունվի կարգ, որ ընդմիջումներին դասասենյակների դռները լինեն դաց: Որպեսզի չգագացի դռները հաճախ բացելու կարիքը եւ որպեսզի գիտենենք, թե ինչ է կատարվում դռան ետևում, լավ է, երբ դռան մի մասը ապակեպատ է: Աշակերտը հեշտությամբ կնկատի ուսուցչին, իսկ դպրոցի տնօրինությունն էլ միջանցքով անցնելիս կտեսնի, թե որ սենյակներն են զբաղեցված:

### **Գրքերը.**

Որպեսզի աշակերտների մոտ ծագի հետաքրքրություն ընթերցանության նկատմամբ, նշանակալի է դասասենյակներում լինեն գրքեր: Դա դժվար չէ: Հնարավոր է ուսուցիչն ինքն բերի տանից գրքերը: Ցանկալի է, դպրոցում անցկացվեն գրքերի հավաքման միջոցառումներ, որտեղ դպրոցի համայնքն, շրջանավարտներն ու դպրոցի բարեկամները այս կամ այն դասարանին կօգնեն դասարանական գրադարանի ստեղծման գործում:

### **Տեխնոլոգիաները.**

Համակարգչային դահիճները տարբեր դպրոցներում տարբեր ձևով են օգտագործում: Կան դպրոցներ, որտեղ դասից հետո համակարգչային սենյակում գործնականում ոչ ոք չի մնացել: Դա այնպիսի դպրոցներն են, որտեղ համակարգիչների պահպանության համար ավելի շատ են մտահոգված, քան նրանով, որ աշակերտին շատ ավելի ժամանակ վերապահեն համակարգիչից օգտվելու համար: Վրաստանում աշակերտիների մեծ մասը դեռևս տանը չունի համակարգիչ: Դպրոցի համակարգիչը, նման դեպքերում, աշակերտի համար հնարավոր է նման տեխնոլոգիաներից օգտվելու մինակ հնարավորությունն է: Նշանակալի է դպրոցն հոգա այն մասին, որ սեփական ռեսուրսներն առավելագույն օգտագործի ի սպաս աշակերտների:

Դրա համար ցանկալի է, որ դպրոցն դասերից հետո բաց թողնի համակարգչային դասարանի դռները, որպեսզի աշակերտները կարողանան ազատ դրանից օգտվել:

### **Համացանցը.**

Դպրոցում համացանցի առկայությունը նշանակալիորեն փոխում է միջավայրը: Այն ժամանակ, երբ բջջային տեխնոլոգիաների մատչելիությունը մեծանում է եւ այդ տեխնոլոգիաներով դյուրին է համացանց մուտք գործելը, աշակերտները հաճախ են այն օգտագործում ուսուցման գործընթացքում եւ դրան գուզահետ: Դա, մի կողմից, կապված է բազում հիմնախնդիրների հետ, սակայն բավականին դրական ազդեցություն կարող է գործել:

### **Վարչական տարածքները.**

Աշակերտներն ու ծնողները հաղորդակցվում են դպրոցի վարչության հետ: Դա հաճախ պայմանավորված է անցանկալի անհրաժեշտությամբ, սակայն հնարավոր է դրոցի վարչության հետ որոշակի պայմանավորվածության հասնելու կամ հարցերիի առաջադրման համար երեխաները նույնպես հաճախակի հարաբերվեն վարչության հետ: Նշանակալի է, որ վգարչական տարածքները այնպես լինեն կարգավորված, որ աշակերտները չվախենան դրանց օգտագործումից:

### **Միջանցքները.**

Դպրոցի միջանցքները դպրոցի տիպային շենքերում այնպես են ծրագրված, որ ողջ տարածքը լինի թափանցիկ: Դա դյուրացնում է վերահսկողությունը, քանի որ միջանցքի վերջից հնարավոր է տեսնել այն ողջ երկարությամբ, թե ինչ է կատարվում վերջում: Մյուս կողմից, դպրոցների մեծ մասում միջանցքի երկու կողմերում դասասենյակներ են տեղադրված: Դա ծրագրվել է տարածքների առավելագույն օգտագործման նպատակով: Բանն այն է, որ դպրոցների մեծ մասում միջանցքները օգտագործվում են տեղաշարժման եւ ոչ թե ուսուցման համար: Իսկ դա նշանակում է, որ դպրոցի տարածքի բավականին մեծ մասը, մեկ քառորդը եւ երբեմն էլ, մեկ երրորդը օգտագործվում է միայն օժանդակ նպատակների համար: Բայց չէ, ուր այդ տարածքը կարելի է հիանալի օգտագործել ակադեմիական նպատակների համար: Նաեւ հնարավոր է միջանցքներն այնպես ծրագրել, որ այն նպաստի աշակերտների սոցիալիզացմանը, նվազեցնի բացասական վարքն եւ տրամադրի աշակերտներին ցանկալի արժեքների ընդունմանն ու զարգացմանը:

### **Աշակերտների գնահատումը.**

Աշակերտների վրա դրական է ազդում, երբ նրա աշխատանքին դպրոցը հարգանքով է վերաբերվում եւ երբ նրա ստեղծագործությանն ու ակադեմիական առաջադիմությանը բավարար ուշադրություն են հատկացնում: Դպրոցի միջանցքներն ու մուտքը այն լավագույն տարածքներն են նրա համար, որ դպրոցն աշակերտներին ներկայացնի իր վերաբերմունքը:

### **Միջանցքի օգտագործումը ուսումնական նպատակներով.**

Հայտնի է, որ աշակերտները ուսման նկատմամբ առանձնակի պատասխանատվություն են դրսևորում այն ժամանակ, երբ նրանց ուսման արդյունքը, նրանց աշխատանքները տեսնում են ոչ միայն ուսուցիչները, համադասարանցիները, այլ ավելի մեծ լսարանը: Ուստի արդյունավետ է նման աշակերտներին հանձնարարեք այնպիսի աշխատանքներ ստեղծեն, որոնք կարելի է ներկայացնել դպրոցի միջանցքներում:

### **Վանդալիզմը.**

Առանձին դպրոցներում պատահում է, որ նկարներն ու պատկերները փակցվում են բավականին բարձր: Նման դպրոցներում վախենում են, որ աշակերտները կվնասեն այդ նկարները եւ այդ միջոցով փորձում են դրանք պաշտպանել: Առանձին տնօրենների կարծիքով, միջանցքներում աշակերտների գործերը չեն փակցնում այն պատճառով, որ սպասելի է, որ դրանք կվնասվեն:

### **Սոցիալիզացումն եւ հանգիստը.**

Դասերի միջեւ, ընդմիջմանը, դպրոցն սկսելուց առաջ եւ դպրոցից հետո, աշակերտները բոլորից հաճախ սոցիալիզացումն իրականացնում են միջանցքներում: Հենց այդտեղ նրանք հնարավորություն ունեն, որ ոչ ձեռական միջավայրում հարաբերվեն իրենց համադասարանցիների հետ: Հենց այդտեղ է ծագում հնարավորությունը, որ ծանոթանա մյուս աշակերտների հետ:

### **Ակուստիկան.**

Ընդմիջմանը աշակերտները միջանցքներում հաճախ բարձրաձայն խոսում են կամ այնպես վարվում, որ աղմուկ է բարձրանում: Դա առանձնակի հիմնախնդիր է այն ժամանակ, երբ դասերը տարբեր ժամանակներում են ավարտվում: Առաջին դասարանցիները, հիմնականում, ավելի կարճ դասաժամեր ունեն, քան մյուսները: Նաեւ դպրոցների մի մասը տարբեր գրաֆիկներ է օգտագործում տարբեր աստիճանների համար, որպեսզի ընդմիջման ժամանակը չհամընկնի: Այդ միջոցով դպրոցում ծագում է հնարավորություն, իր սահմանափակ ռեսուրսները առավել արդյունավետ օգտագործելու համար: Բոլոր աշակերտները միաժամանակ բուֆետ չեն գնում, բոլոր աշակերտները միաժամանակ չեն տեղաշարժվում միջանցքներով: Դա նշանակալի է այնպիսի դպրոցներում, որտեղ առկա է աշակերտների մեծ քանակության հիմնախնդիրը:

### **Ավագների դերը ընդմիջումներին.**

Նշանակալի է, որ ընդմիջումներին միջանցքներում ավագներ էլ լինեն: Նրանց գտնվելը նպաստում է աշակերտների նորմալ վարքին, աշակերտների եւ չափահասների միջեւ հարաբերությունների խորացմանը: Հենց այդ նպատակով, նշանակալի է, որ չափահասների գտնվելը չլինի վերահսկողության արհեստական արտահայտությունը: Ուսուցիչները, ուսումնական բաժինը կամ մանդատորը, ովքեր միջանցքներում են գտնվում նրա համար, որ աշակերտներին դիտողություն անեն, աշակերտների համար նվազ հետաքրքիր անձնավորություններ են:

## **Բուֆետը.**

Բուֆետը այն տարածքներից մեկն է, որտեղ աշակերտները կարող են, համեմատաբար երկար ժամանակով հաղորդակցվել իրենց համադասարանցիների հետ: Բուֆետում լավ է երևում թե հարաբերության ինչպիսի կուլտուրա է տարածված, ինչ խմբավորումներ կան, որքանով է դպրոցում ընկալվում միասնական հասարակության գոյությունը, որքանով են միմյանց հետ հաղորդակցվում չափահասներն ու աշակերտները:

## **Մարզական դահլիճ/ախաղահրապարակ**

Մարզական դահլիճների եւ խաղահրապարակների կարգավորմանը նշանակալի է հաշվի առնել դրանց մատչելիության հարցը: Եթե դպրոցական ֆուտբոլի կամ բասկետբոլի հրապարակների օգտագործումը իրականացվի կազմակերպված, ապա աշակերտների շրջանում մրցակցությունը կկարգավորվի: Հնարավոր է հատուկ հերթականության կազմումը, որտեղ աշակերտները նախօրոք կարող են գրանցվել: Ինչ խոսք, նման միջոցների ընդունումը արդյունավետ է այնտեղ, որտեղ ռեսուրսները սահմանափակ են եւ դրանցից օգտվել ցանկացողների թիվը մեծ է:

## **Դպրոցի բակը.**

Դպրոցի բակը նշանակալի ռեսուրս է դպրոցի համար: Ինքնին հայտնի է, որ դա հիալաի վայր է աշատերկների միջեւ հաղորդակցության ձեւավորման համար: Դա հաճախ տեղի է ունենում առանց ծրագրավորման: Թեպետ ծրագրավորման դեպքում, սոցիալիզացման համար կլինեն հիանալի պայմաններ ու բակում անցանկալի վարքը կնվազի:

## **Գրադարանը.**

Վրաստանում աշակերտների մեծ մասը տանը բավարար քանակության գրքեր չունեն, որ կարողանան բավարարել իրենց անհատական մտավոր հետաքրքրությունները: Այդ աշակերտները, բնականաբար նվազ հավանական է, որ տանը ունենան համացանցին միացված համակարգիչներ: Իսկ այն աշակերտները, ովքեր տանը գրքեր ունեն, քիչ հնարավորություն ունեն գնելու նոր հրատարակված գրքերը: Ուստի դրոցի գրադարանը ի վիճակի լրացնելու այդ նշանակալի բացը: Ճիշտ գործելու դեպքում դպրոցի գրադարանը ոչ միայն իրենց աշակերտների, այլև դպրոցական մյուս համայնքների անդամների համար մեծ օգուտ կարող է բերել:

## **Օգտագործած գրականությունը.**

Տիմոն Ջանաձա, Զեմբաջե օրիենտիրեբული Սակոլո ֆոնոկուրի Գարեմո, Տամոխալաթո Գանջոտարեբոս Ինստիտուտ, 2012

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ

ԵՎ

ԴՊՐՈՑԸ ԹՈՂՆԵԼՈՒ ՌԻՍԿԵՐԸ

ԹԱՄԱՐ ՄՈՍԻԱՇՎԻԼԻ



*Ուսուցիչը, բժիշկը, տեխնիկը, հողը մշակել իմացողները, բոլոր նրանք, ովքեր զինված են գիտությամբ ու գիտելիքներով, բոլորը հիմա անհրաժեշտ են: Եթե իրոք սիրտը ցավում է ժողովրդի համար, հանդես գանք, որ անգիտության խավարը ցրենք, եթե հազեցված ես ժողովրդի սիրով, գործով ապացուցիր այդ սերն ու շատերին դուրս բեր անգիտությունից:*



Ի՞նչ դեր ունեն ծնողները, ընտանիքն ու դպրոցական համայնքն անվտանգ միջավայրի ստեղծման գործում: Բոլոր երեխաները ունեն՝ դպրոցում կրթություն ստանալու հնարավորություն:

Բռնության վերաբերյալ լրատվամիջոցներից իմանում ենք, լինում էնաե այնպես, որ լրատվամիջոցները մանրամասն նկարագրում են բռնությունը, տեղի ունեցած վերաբերյալ կազմում համապատասխան սյուժեներ: Հաճախ լրատվամիջոցների կողմից իրականացված «հետաքննության» թե դատավարության հանդիսատեսն ենք դառնում: Բռնության բովանդակությամբ են կազմված շատ տեսախաղերը, կինոնկարները, սերիալները: Թեպետ բռնությունը երեւակայական հարթության հատվածը չէ:

Ինչպիսի՞նն է իրավաճակը Վրաստանում այդ տեսանկյունից.

**Ի՞նչ է վկայում վիճակագրությունը.**

Գրող Մարկ Տվենը աչքի էր ընկնում նաեւ սուր խոսքերով: Իբր նա ասել է. §Սուտը երեք տեսակի է՝ սուտ, անամոթ սուտ եւ վիճակագրություն!': Ոմանք գտնում են, որ այս խոսքերը Մարկ Տվենին չեն պատկանում: Դա նշանակություն չունի: Թվերով հնարավոր է գնահատել հիմնախնդրի մասշտաբները:

Վրաստանի ազգային վիճակագրության ծառայության տվյալներով, 2014-2015 ուսումնական տարվա սկզբին 14 104 երեխա թողել է դպրոցը: 14104 մարդու կյանքում այնպիսի բան է պատահել, ինչը նրանց դպրոցից դուրս է թողել: Այդ երեխաները անվտանգ միջավայրում չեն ապրում եւ դպրոցն էլ նրանց համար անվտանգ չէր: Դպրոցն թողնելու ցուցանիշը առանձնապես բարձր է իններորդ, տասներորդ եւ տասնմեկերորդ դասարաններում՝ 11 388 երեխա (80,74%՝ թողեց դպրոցը:

Դպրոցն թողնելու պատճառները բազմաբնույթ են: Կանգ առնենք դրանցից երկուսի վրա՝ վաղ ամուսնության եւ մանկական աշխատանքի վրա:



**Վաղ ամուսնությունը.** Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության կողմից 2015 թվականին հրատարակած վիճակագրական «Ժողովրդագրական իրավիճակը Վրաստանում» ժողովածուում նշված է, որ ամուսնացել է 16-ից մինչև 19 տարեկան 31526 տղամարդ է 31526 կին, ինչը կազմում է ամուսնացած տղամարդկանց 2,7% եւ ամուսնացած կանանց 14,0%-ը:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Վրաստանն էւ վաղ ամուսնությունը» հետազոտությունում (Մայա Բերքախա, 2013<sup>ա</sup> նշված է, որ մայրաքաղաքում էւ տարածաշրջաններում վաղ ամուսնությունը պայմանավորված է աղքատությամբ եւ սոցիալական ցածր կարգավիճակով: Այն ընտանիքների համար, որոնք գտնվում են նյութական կարիքավորների շեմին, աղջկա վաղ ամուսնությունը յուրատեսակ էլք է, իսկ աղջկա վաղ ամուսնությունը ընկալում են որպես ընտանիքում առկա դիմակայության, թե անտանելի իրավիճակից դուրս գալու միջոց:

Վաղ ամուսնությունը դպրոցից աղջիկների հեռանալու գլխավոր պատճառներից մեկն է: Ամուսնությունից կամ նշանադրությունից հետո, ազգային առանձին փոքրամասնությունների դեպքում, աղջիկները դադարում են դպրոց հաճախելուց:

Բազմացման առողջապահական կենտրոնի տեղեկատվությամբ, մինչև 18 տարեկան ամուսնացած կանանց մեծամասնությունը չի կարողանում ստանալ միջնակարգ եւ բարձրագույն կրթություն:

**Մանկական աշխատանքը.** 2015 թվականի մայիսին Քաղաքացիական զարգացման ինստիտուտը անցկացրեց տեսական հետազոտություն թեմայով, թե ինչ ազդեցություն է գործում Վրաստանում առկա անվտանգ դպրոցի քաղաքականությունը ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների վրա: Հարցման ենթարկվեցին մի քանի ֆոկլու-խմբեր եւ անցկացվեցին հարցազրույցներ տնօրենների, ուսուցիչների եւ փորձագետների հետ:

Հետազոտման առաջին ընկալումն այն է, որ վաղ ամուսնության հետ միասին, դպրոցն թողնելու պատճառներից մեկը հաճախ դառնում է մանկական աշխատանքը: Երեխաները ներգրավված են ընտանեկան տնտեսություններում եւ հաճախ բացակայում են դասերից: Նրանք օգնում են ծնողներին եւ նրանց հետ պայքարում գոյության աղբյուրը գտնելու համար: Իսկ այդ պայքարը երեխայից պահանջում է թողնել դպրոցը կամ դասերից հաճախ բացակայել:

Ընտանեկան տնտեսություններում երեխաների աշխատանքը միայն Վրաստանի հիմնախնդիրը չէ: Ինչպես նշեց մանկական աշխատանքի վերացման միջազգային ծրագրի տնօրեն Կոնստանս Թոմասը (*Constance Thomas*), ընտանեկան տնտեսություններում երեխաներին աշխատեցնելը ոչ միայն լուրջ խախտում է, այլեւ արգելակում է երկրի ու աշխարհի զարգացմանը:

### **Վրաստանի օրենսդրությունը.**

Վրաստանը միացել է միջազգային կոնվենցիաներին: Մեր երկրում գործող օրենսդրության համաձայն, բոլոր քաղաքացիներն ունեն կրթություն ստանալու իրավունք եւ ընդհանուր կրթությունը երկրում անվճար է: 2002 թվականի մայիսի 18-ին Վրաստանի խորհրդարանը վավերացրեց «Մանկական աշխատանքի ծածրահեղ դրսեւորումների արգելման եւ անհապաղ վերացման միջոցառումների մասին» 182րդ կոնվենցիան: Փաստաթղթում որպես մանկական

աշխատանքի նվազեցման ուղի նշված է անվճար բազային եւ մասնագիտական կրթության ապահովումն այն երեխաների համար, ովքեր ներգրավվել են նման աշխատանքում:

Վրաստանի գործող օրենսդրությունը նաեւ սահմանում է աշխատանքային գործունեության եւ ամուսնության համար ամապատասխան տարիքը: Աշխատանքային գործունեությունն ու ամուսնությունը մինչեւ 16 տարեկանը, արգելված է: 16 տարեկան քաղաքացու ամուսնության համար անհրաժեշտ է ծնողի թույլտվությունը, իսկ աշխատանքային գործունեությունը կարող է արգելք հանդիսանա անչափահասի կրթություն ստանալու գործում:

## **Ինչո՞ւ է այդքան բարձր դպրոցն թողնելու ցուցանիշը**



Հարցը հռետորական է: Պատճառների պարզումը այնքան էլ դյուրին չէ: Հետազոտողները դպրոցը թողնելու պատճառները բաժանում են մի քանի կատիգորիաների: Ջոն Հոպկինսի համալսարանի հետազոտող Ռոբերտ Բալֆանցը (Robert Balfanz) նշում է չորս պատճառները.

1. Աշակերտները դպրոցը թողնում են անձնական կյանքի պատճառով: Պատճառը դպրոցից դուրս է: Դա կարող է լինել վաղ ամուսնությունը (հղիությունը), աշխատանքը՝ ընտանիքին օգնելու նպատակով:
2. Աշակերտի համար սովորելը ձանձրալի դարձավ, նա գտնում է, որ առանց դպրոցի ատեստատի էլ քկարող է գտնել իր կյանքի ուղին: Նա դպրոցից «չքանում է»:
3. Ակադեմիական ցածր առաջադիմություն եւ բարդ վարք ունեցող աշակերտի դպրոցից հեռանալն կամ այլ դպրոց տեղափոխվելը խրախուսվում է դպրոցի կողմից:
4. Աշակերտը դպրոցում անհաջողակ է, իսկ դպրոցը նրան չի օգնում ինքնայուրացման հարցում: Չափահասության ժամանակ էլ մարդկ դժվարանում է հաղթահարել դպրոցից հետապնդող «անհաջողակի սինդրոմը»:

Աշակերտի կողմից դպրոցի թողնելը ազդեցություն է գործում ողջ հասարակության վրա: Ոչ լրիվ կրթություն ունեցող, հասարակությունից օտարված, մեկուսացված ապրող քաղաքացին նվազ եկամուտներ ունի. նվազ հարկեր է վճարում կամ ընդհանրապես չի վճարում: Վերջին հաշվով, նրա փրկությունը երկրի գործն է: Մի գիտնական չէ, որ ապացուցել է պետության տնտեսական զարգացման ու կրթության միջեւ առկա անմիջական կապը: Նրանց կարծիքով, դպրոցում ձեռք բերած կոգնոտային ունակությունն եւ տնտեսական աճը անմիջականորեն կահակցված են (Հանուշեկ, 2008<sup>ա</sup>:

Այդ ունակությունների զարգացման միակ վայրը Վրաստանում մնում է դպրոցը: Ինչպես ասաց Իլիան.

*Տնօրեն-կրթությունը հարստության գլուխն է, հետևաբար, այստեղ ոչինչ խնայել պետք չէ, որ այդ ակունքից հարստության աղբյուրը հոսեցնենք!:*

## **Ինչպե՞ս բացահայտենք դպրոցը թողնելու բարձր ռիսկի երեխաներին**

Ակադեմիական նվազ ձեռքբերումներ ունեցող աշակերտների դպրոց հաճախելու շարժառիթը ցածր է: Երբ երեխայի մոտ նկատվում են վարքի հիմնախնդիրներ, ապա դա կարելի է համարել դպրոցն թողնելու ախտանիշ:

Դասերից հաճանխակի բացակայությունն էլ կարելի է համարել դիրոցն թողնելու նախնական ախտանիշ: Բացակայությունը նշանակում է, որ աշակերտին դուր չի գալիս դպրոց հաճախելը, իրեն օտար է զգում եւ ծնողական խնամքն ու ուշադրությունը անբավարար է:

Ընտանիքի եկամուտը, ծնողների կրթությունը անմիջականորեն կապված են աշակերտի կողմից դպրոցն թողնելու ցուցանիշների հետ: Անչափահասի վրա նաեւ ազդում է ծնողի վերաբերմունքը դպրոցի նկատմամբ: Երբ ուսուցիչը չի հարողանում հաղորդակցվել ծնողի հետ երեխայի հիմնախնդիրների կարգավորման համար, դա էլ կարելի է համարել դպրոցն թողնելու ախտանշան:

## **Անվտանգ դպրոցի քաղաքականությունը Վրաստանում**

Գոյություն ունի դպրոցում անվտանգության ապահովման երկու մոտեցում.

ա<sup>Բ</sup> Գործընթացի վրա հիմնված մոտեցումը անվանում են նաեւ հոգածությանը կողմնորոշված մոտեցում: Այն նախատեսում է դպրոցում աշակերտին կողմնորոշված կլիմայի հիմնում, աշակերտների աջակցության մեխանիզմների գործարկում, վարժանքների, խորհրդատվությունների եւ դպրոցական կամ համայնքային այլ ակտիվություններ:

բ<sup>Բ</sup> Արտադրանքի վրա հիմնված մոտեցումը անվանում են նաեւ վերահսկողությանն կողմնորոշված մոտեցում: Այդ ժամանակ իրականացվում են հիմնախնդրի կարճաժամկետ լուծմանն կողմնորոշված միջոցառումներ: Օրինակ, դպրոցի անվտանգության պահպանումը տեսախցիկներով, դետեկտորներով, պահակով, մանդատուրների եւ կարգապահական միջոցների գործարկմամբ:

(Բուչերի եւ Մենինգ, 2005<sup>Բ</sup>)

Վրաստանում անվտանգ դպրոցի հիմնադրույթը առաջնահերթությունը շնորհում է աշակերտի ֆիզիկական անվտանգությանը: Այդ նպատակով Վրաստանում գործարկվեց մանդատուրների իստիտուտը, դպրոցներում մոնտաժվեցին տեսախցիկներ եւ մի շարք դպրոցներում խստորեն վերահսկվում է օտար մարդկանց մուտքը: Անվտանգ դպրոցի գործող հիմնադրույթը չի նախատեսում դպրոցի համայնքի ներկայացուցիչների ներգրավումը դպրոցական կյանքում: Այդ միջոցառումները թուլացրին դպրոցի եւ համայնքի միջեւ առանց այդ էլ անբավարար կապերը:

Դպրոցը թողնելը վերահսկողությանը կողմնորոշված մոտեցումներով չի պակասի: Աշակերտի անվտանգության վրա ազդեցություն են գործում ընտանիքի եւ համայնքի մշակույթն ու ավանդույթները, եկամուտն ու ծնողների կրթությունը: Դպրոցում, որտեղ կարգապահական պատիժները կարգուկանոնի հաստատման միակ կարգավորիչներն են, դպրոցն թողնելու ցուցանիշները չեն նվազի: Տեսախցիկները, մանդատուրն եւ պահակը չեն կարող վերահսկել ու կառավարեն այն միջավայրը, որտեղ աշակերտն ապրում է:

### **Ինչպե՞ս նվազեցնենք դպրոցն թողնելու ցուցանիշը.**

Դպրոցի բազայի վրա աջակցության մեխանիզմները պետք է ներկայացնեն կոնկրետ դպրոցում բացահայտված կոնկրետ անհրաժեշտությունները:

Եթե անչափահաս աղջիկները ամուսնանում են եւ հրաժարվում սովորելուց, անչափահասները բացակայում են դասերից ընտանեկան աշխատանքային գործունեության պատճառով, պետք է ենթադրել, որ դպրոցն ու դպրոցի համայնքն հանդուրժողական է այդ փաստերի նկատմամբ: Յուրաքանչյուր աշակերտը, որը թողնում է սովորելը, ապագայում շատ կղվարանա ինքնահաստատման եւ ինքնայուրացման հարցում: Այդ թեմայի շուրջ խոսելիս մարդիկ հաճախ մեղադրում են միմյանց: Ասում են, որ աշակերտը անպատասխանատու է եւ տարօրինակ, ծնողները ավելի մեծ պատասխանատվություն են ստանձնելու, ուսուցիչները ավելի լավ պետք է սովորեցնեն, վարչությունը պետք է վերահսկի աշակերտի վարքը: Սակայն հաճախ մոռանում են, թե ինչ պետք է անել, որ դպրոցն թողնելու ցուցանիշը նվազի: Ելքը դպրոցի եւ հասարակության միջեւ հարաբերությունների բարելավումն է:

Բնական է, դա դպրոցն ինքնուրույն իրականացնել չի կարող, քանի որ դրա համար պահանջվում են լրացուցիչ ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ: Միաժամանակ, հաջողության համար նշանակալի է ամառային դպրոցը, լրացուցիչ հանրակրթական սպասարկումները ներկայացնեն հասարակության շահերը: Այդ պատճառով նշանակալի է դպրոցի բաց լինելը բիզնեսի, համայնքային կազմակերպությունների, համալսարանների ու երիտասարդական խմբերի նկատմամբ: Նաեւ նշանակալի է լրատվամիջոցների հետ համագործակցությունը, որ հասարակությունը առավելագույն տեղեկանա դպրոցի համար նշանակալի հարցերի վերաբերյալ:

Առաջարկում ենք դպրոցում աշակերտների անվտանգության ապահովման մի մոտեցումը (Stephens, 2004, p. 80).

*Դպրոցում անվտանգ միջավայրի ստեղծման համար հիմնել աշխատանքային խումբ, որի կազմում կլինեն ուսուցիչներ, ծնողներ, համայնքի ակտիվ անդամները:*

*Դպրոցում անվտանգության վերաբերյալ տվյալների հավաքումը (տեղեկատվությունը աշակերտների միջեւ ֆիզիկական հակադրության, ընտանեկան վիճակի, աղքատության եւ բռնության այն ռիսկերի մասին, որոնք կարող են լինել դպրոցական համայնքում)*

*Նրանից հետո, երբ դպրոցն կհավաքի տեղեկատվությունը, աշխատանքային խումբը պետք է մշակի կոնկրետ դպրոցի անվտանգության ռազմավարությունն եւ ծրագրի համապատասխան միջոցառումները:*

*Անհրաժեշտ է, որ աշխատանքային խումբը գնահատի, թե ընտրված միջոցառումները որքանով են համապատասխանում օրենքին, չեն խախտվում, արդյոք, երեխայի իրավունքները: Այդ առումով դպրոցներին կարող են օգնել հանրակրթական ռեսուրս կենտրոնի իրավաբանը եւ տարածաշրջաններում գործող անվճար իրավաբանական կենտրոնները (օրինակ, Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի տարածաշրջանային գրասենյակները):*

*Դպրոցում, մինչեւ անվտանգ դպրոցի ծրագրի հաստատումը, պետք է անցկացնեն հանրային հանդիպումներ: Նշանակալի է, որ ծրագիրը քննարկվի հանրային հանդիպումներում, որտեղ ահրավիրված կլինեն ծնողներ, տեղի համայնքի ներկայացուցիչներ:*

*Դպրոցը ծրագիրը տարին մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում, նորացնելու է:*

## **Եվ վերջում.**

Դժվար է հասավարակչության պահպանումը անվտանգ դպրոցի եւի հոգատար դպրոցի միջև: Անհրաժեշտ է այնպիսի դպրոցական միջավայրի ստեղծումը, որտեղ չի լինի հանդուրժողականության բուլինգը ֆիզիկական հակադրությունների նկատմամբ: Միաժամանակ, դպրոցն պետք է կարողանա փոխել մանկական աշխատանքի եւ վաղ ամուսնության նկատմամբ համայնքի վերաբերմունքը, բարձրացնել գիտակցականության մակարդակը:

Անվտանգ դպրոցի ստեղծման գործընթացը անընդմեջ է: Չի կարելի ասել, որ անվտանգ դպրոցական միջավայրի ստեղծումն ու գործընթացն ավարտված է: Դպրոցն առանց աջակցության անվտանգության հիմնախնդիրը չի կարողանա կարգավորել:

## **Օգտագործած գրականությունը.**

Մաია Զարեյա, „საქართველო და ადრეული ქორწინება“, თბილისი, გაეროს მოსახლეობის ფონდი, 2013

სიმონ ჯანაშია, სოფიო გორგოძე; უსაფრთხო სკოლის პოლიტიკის დოკუმენტი, სამოქალაქო განვითარების ინსტიტუტი, თბილისი, 2011

„დემოგრაფიული ვითარება საქართველოში, სტატისტიკური კრებული“, საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, 2015

Balfanz R; Fox J, Early Warning Systems- Foundational Research and Lessons from the Field Johns Hopkins Univ. National Governors Association, 2011

[Education and Economic Growth E A Hanushek, Stanford University, Stanford, CA, USA L Woßmann, University of Munich, Munich, Germany](#), ნანახია 2016 წლის 25 იანვარს

[http://www.ilo.org/global/about-the-ilo/newsroom/news/WCMS\\_215170/lang--en/index.htm](http://www.ilo.org/global/about-the-ilo/newsroom/news/WCMS_215170/lang--en/index.htm)

ნანახია 2016 წლის 25 იანვარს

<http://dropoutprevention.org/effective-strategies/safe-learning-environments/> ნანახია 2016

წლის 25 იანვარს

[http://geostat.ge/cms/site\\_images/files/georgian/population/Demografiuli%20Vitareba%20SaqartveloSi-Krebuli%202015.pdf](http://geostat.ge/cms/site_images/files/georgian/population/Demografiuli%20Vitareba%20SaqartveloSi-Krebuli%202015.pdf) ნანახია 2016 წლის 25 იანვარს

[http://www.ilo.org/global/about-the-ilo/newsroom/news/WCMS\\_215170/lang--en/index.htm](http://www.ilo.org/global/about-the-ilo/newsroom/news/WCMS_215170/lang--en/index.htm)

ნანახია 2016 წლის 25 იანვარს